

**Հայաստանի պետական ագրարային համալսարանի
2011թ. գործունեության համառոտ**

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. ՈՒՍՈՒՄՆԿԱՆ ԳՈՐԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Հայաստանի պետական ագրարային համալսարանի (այսուհետև համալսարան) գործունեության բոլոր ոլորտների ցուցանիշները պայմանավորված են ուսանողների, սովորողների, մագիստրանտների և ասպիրանտների տարեկան շարժով ու ընդհանուր թվաքանակով:

2011թ. ընթացքում նշված ելակետային ցուցանիշները կազմել և կրել են հետևյալ փոփոխությունները.

1.1. Առկա ուսուցման քակայավորային կրթական աստիճանում գործող ուսանողների թվաքանակը 2011թ հունվարի 1-ի դրությամբ կազմում էր 3818 (աղյուսակ 1), որից 2957-ը վճարովի համակարգում: 2012թ. հունվարի 1-ի դրությամբ այդ թվաքանակները համապատասխանաբար կազմում են՝ 2769 և 2105: Ուսանողների ընդհանուր թվաքանակը 3323 է:

Հաշվետու տարվա ընթացքում համալսարանն ավարտել են 819 ուսանողներ, որից 582-ը՝ վճարովի համակարգից: Առկա ուսուցման առաջին կուրսեր ընդունվել են 35 ուսանողներ, որից վճարովի՝17-ը: Համալսարանից հեռացվել են 132 ուսանողներ (127-ը վճարովի համակարգից), 544 ուսանողների ձևակերպվել է ակադեմիական արձակուրդ, որից՝ 533-ը զինվորական ծառայության կապակցությամբ, 11-ը՝ առողջական վիճակի:

Առկա ուսուցման համակարգում միայն «գերազանց» գանահատականներով սովորում են 330 ուսանողներ, որից 97-ը՝ վճարովի համակարգից: Տարվա ընթացքում վարձավճարի գեղջից սահմանված կարգով օգտվել է 278 ուսանողներ: ՀՀ օրենսդրությամբ և կառավարության որոշմամբ վճարովի համակարգի 39 ուսանողներ լիովին ազատվել են վարձավճարից: Անվանական կրթաթոշակ ստանում են 40 ուսանողներ:

Համալսարանում 2010-11 ուստարվա կիսամյակային քննաշրջանները պլանավորվել և կազմակերպվել են ըստ ուսումնական պլանների և տարեկան գրաֆիկների՝ սահմանված ժամկետներում: Քննական բոլոր գրաֆիկները, անցկացման և վերահսկման կարգը քննարկվել են ռեկտորատում ու համապատասխան ստորաբաժանումներում:

Քննություններն անց են կացվել կենտրոնացված կարգով՝ ռեկտորատի ներկայացուցիչների, դեկանատների և կրթության որակի ապահովման ու վերահսկման բաժնի աշխատակիցների մասնակցությամբ, վերահսկողությամբ:

Ուսումնական պարապմունքներին ուսանողների բարձր հաճախելիության հարցը միշտ եղել և մնում է համալսարանի գիտական խորհրդի, ռեկտորատի, ֆակուլտետների և ամբիոնների ամենօրյա ուշադրության կենտրոնում: Դրա արդյունքում վերջին տարիներին համալսարանում արձանագրվել է ուսանողների հաճախելիության բարձր ցուցանիշներ:

Ուսանողների ուսումնական պարապմունքներին մասնակցության այս ցուցանիշները հանրապետության մյուս բարձրագույն ուսումնական հաստատությունների համաեմատ բավականին բարձր արդյունք է, սակայն բացակայությունների 7% արդյունքը դեռևս լուրջ

խնդիր է և այն նվազեցնելու համար համալսարանի կուլեկտիվը դեռևս շատ անելիքներ ունի:

Հատկապես անհանգստացնող են ուսանողների անհարգելի բացակայությունները, որոնք բացակայությունների ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունեն:

2010-11 ուս. տարվա 1-ին կիսամյակում ուսանողների հաճախումների բարձր ցուցանիշներ արձանագրվել են պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում՝ 95,4 % և տնտեսագիտական ֆակուլտետում՝ 94,1%, համեմատաբար ցածր ցուցանիշներ գրանցվել են ԳՄ և ԱՏ ֆակուլտետում՝ 91,6 % և ագրոնոմիական ֆակուլտետում՝ 92,1 %:

1-ին կիսամյակում հաճախումների միջին ցուցանիշը համալսարանում կազմել է 93,5%: 2-րդ կիսամյակում արձանագրվել հաճախումների համեմատաբար ցածր ցուցանիշ՝ 91,3%:

2010-2011 ուս. տարվա շրջափոխման արդյունքները վկայում են, որ ըստ կուրսերի՝ բոլոր ֆակուլտետներում շրջափոխվողների տեսակարար կշիռը տարբեր է:

Համալսարանի 1-ին կուրսերում վճարովի համակարգից անվճար են տեղափոխվել ուսանողների 56%-ը, 2-րդ կուրսերից՝ 30%-ը, 3-րդ կուրսերից՝ 33%-ը և 4-րդ ու 5-րդ կուրսերից՝ շուրջ 16%-ը: Համալսարանի միջին մակարդակով այդ ցուցանիշը կազմել է 34%-ը (աղ. 3):

Առաջին կուրսի առաջադիմության արդյունքներով, 2-րդ կուրսերում անվճար համակարգի 90 ուսանողներից միայն 44-ին (48.8%) հաջողվեց պահպանել կարգավիճակը, վճարովի համակարգի 46 ուսանողներ մրցույթի արդյունքում տեղափոխվեցին անվճար համակարգ, 3-րդ կուրսերում անվճար համակարգի 206 ուսանողներից 163-ը (79%) պահպանել են իրենց կարգավիճակը, վճարովի համակարգի միայն 43 ուսանողի է հաջողվել մրցույթով տեղափոխվել անվճար համակարգ, 4-րդ կուրսում սովորող 209 անվճար համակարգի ուսանողներից 175-ը (83.7%) պահպանել են իրենց կարգավիճակը, վճարովի համակարգից միայն 34 ուսանող է տեղափոխվել անվճար համակարգ: 5-րդ կուրսում սովորող 212 անվճար համակարգի ուսանողներից 175-ը (83.9%) պահպանել են իրենց կարգավիճակը, վճարովի համակարգից միայն 34 ուսանող է տեղափոխվել անվճար համակարգ: Եթե 1-ին և 2-րդ կուրսերում ռոտացիայի արդյունքում վճարովի համակարգից տեղափոխված ուսանողները մոտ 50% էին կազմում, ապա 3-րդ, 4-րդ 5-րդ կուրսերում, այն կազմում է շուրջ 16%: Դա նշանակում է, որ ուսանողները ճիշտ են ընկալել շրջափոխման գաղափարը և մրցակցային դաշտում լուրջ վերաբերմունք են դրսևորում կրթության որակի նկատմամբ:

Իրականացված շրջափոխումների արդյունքում, ոչ ուսանողների և ոչ էլ ծնողների կողմից որևէ դժգոհություն կամ բողոք չի եղել: Պետք է ենթադրել, որ շրջափոխումը իրականացվում է թափանցիկ և օբյեկտիվ, իսկ դրա կարևոր նախապայմանը ուսանողների ակտիվ մասնակցությունն է քննական պրոցեսին և, որ ամենակարևորն է, ուսանողները իրենք են կուրսերում կազմակերպում և իրականացնում շրջափոխման մրցույթը:

2010-11 ուս տարում Համալսարանում, մինչ պետական քննությունների սկիզբը, առկա ուսուցման ավարտական կուրսերի ուսանողների թիվը եղել է 834, որից 833 թույլատրվել է մասնակցել պետական համալիր քննություններին և դիպլոմային աշխատանքների (նախագծերի) պաշտպանությանը: Նրանցից 818-ը (առանց նախորդ տարիների շրջանավարտների) հանձնել են պետական քննությունները, 8-ը (քննությանը թույլատրվածների 1%-ը) ստացել է անբավարար, իսկ 7-ը (0.8%) անհարգելի պատճառներով չի ներկայացել քննություններին: Պետական քննությունները միայն գերազանց գնահատականներով հանձնել են դրական գնահատական ստացած ուսանողների 33.0%-ը, գերազանց և լավ գնահատականներով՝ 28.9%-ը, միայն բավարար գնահատականներով՝ 29.5%-ը, խառը գնահատականներով՝ 8.6%-ը:

Այս ուսումնական տարում դիպլոմային նախագիծ (աշխատանք) պաշտպանել են 489 ուսանող, որոնցից 247-ը (50.5%) ստացել են գերազանց գնահատականներ: Ցերեկային ուսուցման համակարգում համալսարանն ավարտել է 833 ուսանող:

Պետական որակավորման քննությունների արդյունքները և հանձնաժողովների եզրակացություններն ու առաջարկությունները մանրամասն քննարկվել է ՀՊԱՀ-ի գիտական խորհրդում, կայացվել է որոշում և ըստ ֆակուլտետների տրվել է համապատասխան հանձնարարականներ:

1.2. Հեռակա ուսուցման համակարգ

Հեռակա ուսուցման քակալավորային կրթական աստիճանում 2011թ. հունվարի 1-ի դրությամբ ուսանողների թվաքանակը 5744 էր, որից գործող՝ 4977: 2012թ. հունվարի 1-ի դրությամբ. հեռակա ուսուցման ուսանողների թվաքանակը 5577 է (աղ.3) հաշվետու տարում շրջանավարտների թվաքանակը 708 է, ընդունելությունը՝ 650 է, 675 ուսանողների ձևակերպվել է ակադեմիական արձակուրդ գին. ծառայության կապակցությամբ, 22 ուսանողների ձևակերպվել է ակադեմիական արձակուրդ առողջական վիճակի պատճառով:

Տարվա ընթացքում հեռակա ուսուցման համակարգից հեռացվել է 497 ուսանող: Այսպիսով 2012թ. հունվարի 1-ի դրությամբ հեռակա ուսուցման համակարգում գործող ուսանողների թվաքանակը 4880 է: Գերազանց և լավ գնահատականներով սովորում են 112 ուսանողներ, 154 ուսանողներ օգտվել են վարձավճարի զեղչի արտոնությունից, 43 ուսանողի վարձավճարը փոխհատուցվում է պետական նպաստի ձևով, օրենքով սահմանված կարգով:

2010-2011 ուսումնական տարվա տարբեր մասնագիտությունների ավարտական 5-րդ կուրսերի գործող ուսանողների թիվը կազմել է 775, որոնցից տեսական կուրսն ավարտել են 703 ու թույլատրվել են պետական ավարտական քննություններին:

703 ուսանողներից 1-ին պետական քննությանը մասնակցել են 692-ը, 2 ուսանողներ ստացել են «անբավարար» գնահատական, 409-ը՝ (58,19%) «բավարար», իսկ 281-ը՝ (39,97%) «լավ» և «գերազանց» գնահատականներ: 2-րդ պետական քննությանը

մասնակցել են՝ 271 ուսանող, 184 (66,67%) գնահատվել են «բավարար» , իսկ 87-ը՝ (31,52%) «լավ» և «գերազանց» գնահատականներ:

1.3. Ուսումնաարտադրական պրակտիկաների կազմակերպման, անցկացման ու վերահսկման գործընթացը

Բարձրագույն կրթություն իրականացնելիս, ուսանողների տեսական գիտելիքների ձեռք բերմանը զուգընթաց, ներկայումս շատ է կարևորվում նաև նրանց գործնական ու կիրառական հմտությունների և կարողությունների ձևավորումն ու զարգացումը:

Այս տեսակետից բարեփոխումների պահանջներին համահունչ, համալսարանի նորացված ուսումնական պլաններում ծանրաբեռնվածության կենտրոնը տեսական ուսուցումից տեղափոխվում է դեպի ուսանողների պրակտիկ կարողությունների զարգացումը: Ներկայումս, մենք պետք է ուսումնասիրենք և արագ արձագանքենք աշխատաշուկայում գործատուների պահանջներին՝ ապագա մասնագետների առավելապես գործնական գիտելիքների, ունակությունների և հմտությունների զարգացմանը: Ուսումնաարտադրական պրակտիկաները և գործնական պարապմունքները հենց միտված են այդ նպատակներին: Ուսանողների ուսումնական, արտադրական և նախադիպլոմային պրակտիկաները կազմակերպելու և իրականացնելու նպատակով համալսարանը, բացի մեր երկու ուսումնափորձնական տնտեսություններից, համագործակցում է նաև 250-ից ավելի ֆերմերային, արտադրական և վերամշակող ձեռնարկությունների, գյուղացիական տնտեսությունների, մարզային և տարացքային անասնաբուժական կայանների, գիտական կենտրոնների, բանկերի և պետական ու մասնավոր միջազգային կազմակերպությունների և այլ առաջավոր տնտեսությունների հետ:

1.4. Ագրոբիզնեսի դեպարտամենտի

Հայաստանի պետական ագրարային համալսարանի Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի (Ագրոբիզնեսի դեպարտամենտ) համար 2011 թվականը նշանավորվեց կենտրոնի ուսումնական ծրագրերի արտաքին դիտարկման և գնահատման գործընթացով, որը իրականացվեց ծրագրային գնահատման բարձր որակավորում ունեցող 4 միջազգային փորձագետներից բաղկացած աշխատանքային խմբի կողմից՝ բազմափորձ և տիտղոսավոր գիտնականի ղեկավարությամբ: Գործընթացը և վերջինիս ամփոփիչ փաստաթուղթը կարևոր դեր կունենա կենտրոնում որակի ապահովման միջազգային չափանիշներին համապատասխան համակարգի ներդրման և կրթական ծրագրերի հավատարմագրման ինչպես նաև կենտրոնի հետագա կայուն զարգացման տեսակետից:

Գործունեության տասնմեկերորդ տարում ԱՌԿ-ը շարունակեց նոր հաջողություններ արձանագրել արևմտյան չափանիշների վրա հիմնված ուսումնական պլանի իրականացման, ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկայի կազմակերպման, դասախոսների և ուսանողների մասնակցությամբ գյուղատնտեսության և ագրոբիզնեսի ոլորտի հետազոտական ծրագրերի իրականացման, գյուղատնտեսական բարձրագույն կրթության համակարգի բարեփոխումների ուղղությամբ կատարվող աշխատանքների, ԱՌԿ-ի՝ որպես տարածաշրջանային և միջազգային կրթահետազոտական կենտրոնի միջազգային վարկի ու հեղինակության բարձրացման ասպարեզներում:

Ուսանողների շառժ

2011 թ. գարնանային կիսամյակ են տեղափոխվել 56 ուսանողներ: Չորրորդ կուրսի ուսանողների թիվը կազմել է 28, որոնցից 3-ը՝ Վրաստանի Հանրապետությունից: Ուսանողներից 2-ը սովորել են անվճար, 2-ը 50% անվճար համակարգում:

Երրորդ կուրսի ուսանողների թիվը կազմել է 28, որոնցից 6-ը՝ ՎՀ-ից: Ուսանողներից 2-ը սովորել են անվճար, 2-ը 50% անվճար համակարգում:

Գարնանային քննաշրջանում բոլոր ուսանողները ստացել են դրական գնահատականներ: Տվյալ կիսամյակում անհարգելի բացակայություններ չեն գրանցվել: Ուսանողների հեռացումներ չեն եղել:

2011 թ. աշնանային կիսամյակ են տեղափոխվել չորրորդ ավարտական կուրսի 28 ուսանողները, որոնցից 3-ը՝ ՎՀ-ից և չորրորդ կուրսի 28 ուսանողները, որոնցից 6-ը՝ ՎՀ-ից: 2011թ. երրորդ կուրս են հրամանագրվել 33 ուսանողները, որոնցից 7-ը՝ ՎՀ-ից: Անվճար համակարգում սովորում են 2 ուսանողներ:

Աշնանային քննաշրջանում բոլոր ուսանողները ստացել են դրական գնահատականներ: Տվյալ կիսամյակում անհարգելի բացակայություններ չեն գրանցվել: Ուսանողների հեռացումներ չեն եղել:

Ավարտական կուրս

2011թ.-ի սեպտեմբերի 29-30-ին և հոկտեմբերի 20-21-ին ավարտական կուրսի 25 ուսանողներ հանձնեցին երկու համալիր պետական քննություններ համապատասխանաբար «Ֆինանսների վերլուծություն», «Մարկետինգի վերլուծություն», «Կառավարման վերլուծություն» և «Միկրոտնտեսագիտություն», «Մակրոտնտեսագիտություն», «Համաշխարհային էկոնոմիկա», «Բնական ռեսուրսների տնտեսագիտություն» առարկաներից:

Առաջին համալիր քննությանը մասնակցել են կուրսի 25 ուսանողներ, որոնց ստացած նիշերի 96 տոկոսը կազմել են «գերազանց» և «լավ» գնահատականները: Երկրորդ պետական համալիր քննությանը մասնակցել են կուրսի 25 ուսանողներ, որոնց ստացած նիշերի 88 տոկոսը կազմել են «գերազանց» և «լավ» գնահատականները:

Ազրոբիզնեսի դեպարտամենտի պետական քննական հանձնաժողովի 21.10.11թ. նիստի որոշման համաձայն, «Ազրոբիզնես և շուկայաբանություն» մասնագիտության 25 շրջանավարտներին շնորհվել է Տնտեսագետ-շուկայագետի որակավորում: Պետական որակավորման հանձնաժողովի կողմից Մարիամ Սերգեյի Մելոյանին, Լիլիթ Գևորգի Ալոյանին և Հայկուհի Մկրտիչի Ալեքսանյանին շնորհվել է գերազանցության դիպլոմ:

Ավարտական արարողությունը տեղի ունեցավ 2011 թվականի նոյեմբերի 8-ին:

Փոխանակման ծրագրեր

2011թ.-ի սեպտեմբերին «Երասմուս Մունդուս գործողություն 2» ծրագրի շրջանակում Ազրոբիզնեսի դեպարտամենտը հյուրընկալեց յոթ ուսանողների արտերկրից, ովքեր իրենց ուսումը շարունակում են դեպարտամենտի բակալավրիատում և մագիստրատուրայում: Ֆիլիպ Տավերիան, Ռիտա Գուերեյրոն, Անիտա Ֆերեյրան, Սառա Բաքմանը, Սուսանա Ֆերնանդեսը, Ֆրանչեսկա Սա Մայան Պորտուգալիայի Վիանա դե Կաստելոյի պոլիտեխնիկական ինստիտուտից են, իսկ Մարտինս Բերգինսը Լատվիայի Ռեգենկե համալսարանից:

Երասմուս Մունդուս ծրագրի շրջանակում 10-ամսյա ուսումնական ավարտելուց հետո համապատասխանաբար Հունաստանի Ալեքսանդր տեխնոլոգիական կրթական հաստատությունից և Բուլղարիայի Ռուսեի համալսարանից վերադարձան և դեպարտամենտում ուսումը շարունակեցին Հայկ Տեր-Գրիգորյանը և Լիլիթ Ալոյանը (համապատասխանաբար՝ ավարտական 4-րդ և 4-րդ կուրսում):

Մագիստրոսական ծրագիր (MAB)

2011թ.-ի դեկտեմբերին Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագիրը համալրվեց 21 ուսանողներով, որոնցից 14-ը այս տարվա շրջանավարտներ են, ընդ որում ութը սովորում են անվճար համակարգում, 3-ը՝ դեպարտամենտի նախորդ տարիների, իսկ 4-ը՝ այլ բուհերի շրջանավարտներ:

Ագրոբիզնեսի մագիստրոսի աստիճանը նպատակաուղղված է ագրոբիզնեսի հատվածի կազմակերպիչ-առաջնորդների պատրաստմանը՝ կառավարման մակարդակում որոշումներ կայացնելու հարցում համատեղելով տնտեսագիտության, գործարար վերլուծության և քանակական մեթոդները: Սա ագրոբիզնեսի տնտեսագիտության ոլորտում տարածաշրջանում միակ մագիստրոսական ծրագիրն է, որն առաջարկում է Հայաստանի պետական ագրարային համալսարանի՝ միջազգային չափորոշիչներին համապատասխանող մագիստրոսի աստիճան, ինչպես նաև Տեխասի A&M համալսարանի համապատասխան ավարտական հավաստագիր:

Այս պահին քննարկվում է դեպարտամենտի մագիստրոսական ծրագրի շրջանակում Տեխասի A&M համալսարան-Քոմերսի հետ համագործակցությունը կրկնակի դիպլոմ առաջարկելու նպատակով: Տեխասի A&M համալսարան-Քոմերսի Գործարար կառավարման մագիստրոսի (MBA) ծրագիրը հավատարմագրված է Առաջատար համալսարանական բիզնես դպրոցների ընկերակցություն (AACSB) հավատարմագրող մարմնի կողմից: 2012թ. գարնանը նախատեսվում է Տեխասի A&M համալսարան-Քոմերսի պատվիրակության այցը ՀՀՊԱՀ՝ տեղում հարցը մանրակրկիտ քննարկելու և պայմանավորվածություն ձեռք բերելու համար:

Կրկնակի դիպլոմ շնորհելու առումով բանակցություններ են վարվում Եվրոպական մի շարք համալսարանների հետ: Մասնավորապես Ագրոբիզնեսի դեպարտամենտի հետ գործակցությամբ հետաքրքրված է Նիդեռլանդների Մասստրիխտի կառավարման դպրոցը, որի Գործարար կառավարման մագիստրոսի (MBA) ծրագիրը հավատարմագրված է 3 հայտնի հավատարմագրող մարմինների կողմից (ԱՄՆ, Եվրոպա, Մեծ Բրիտանիա):

Արտաքին դիտարկում և գնահատում

Ուսումնական գործընթացի կատարելագործման և դեպարտամենտում կրթության որակի բարելավման նպատակով 2011թ. մայիսին տեղի ունեցավ դեպարտամենտի ուսումնական ծրագրի արտաքին դիտարկման և գնահատման գործընթաց: Գործընթացը նպատակ էր հետապնդում հարցազրույցների և փաստաթղթերի ուսումնասիրության միջոցով բացահայտելու կրթական ծրագրի առանցքային բաղադրիչները՝ շահագրգիռ տարբեր կողմերի՝ ծրագրի տնօրենի, պրոֆեսորադասախոսական կազմի, աշխատա-

կազմի, ուսանողների, շրջանավարտների, ինչպես նաև վերջիններիս գործատուների տեսակետներից:

Գործընթացի համար փորձագետների ընտրությունը կատարվել է ԱՄՆ գյուղ-դեպարտամենտի արտաքին գյուղատնտեսական ծառայության կողմից: Գնահատման խմբի մեջ ընդգրկվել էին Ավստրալիայի Քուինսլենդ համալսարանի պրոֆեսոր Թոնի Դանը, ԱՄՆ Միչիգանի նահանգային համալսարանի պրոֆեսոր Քրիս Փիթսոնը, ԱՄՆ Ֆլորիդայի համալսարանի պրոֆեսոր Ալեն Վիսցկին և խմբի ղեկավար, ԱՄՆ Տեխասի Էյ ընդ Էմ համալսարանի պրոֆեսոր Զերի Լիցենբերգը: Փորձագետները ընտրվել են մրցութային կարգով, ԱՄՆ մի շարք համալսարանների ավելի քան 35 պրոֆեսորների թվից:

Արտաքին դիտարկման և գնահատման գործընթացին նախորդել է դեպարտամենտի ինքնավերլուծության գործընթացը և ինքնավերլուծության փաստաթղթի մշակումը՝ ելնելով արտաքին դիտարկման պահանջներից և ակադեմիական դիտարկում անելու սկզբունքներից, ինչպես նաև հաշվի առնելով Տեխասի A&M համալսարանի փորձը այս բնագավառում:

Հիմնական գնահատման գործընթացից մեկ շաբաթ առաջ տեղի ունեցավ խմբի ղեկավարի նախադիտարկման այցը, նպատակ հետապնդելով շահագրգիռ խմբերից յուրաքանչյուրին նախապատրաստելու բուն գործընթացին:

Գնահատող խումբը հարցազրույցների շարք անցկացրեց շահագրգիռ վեց խմբերի հետ բակալավրիատի հայ ուսանողներ, բակալավրիատի վրացի ուսանողներ, մագիստրատուրայի ուսանողներ, շրջանավարտներ, արտադրության ոլորտի ընկերությունների ղեկավարներ, դասախոսներ և աշխատակազմ: Հարցազրույցների և դեպարտամենտի ինքնադիտարկման փաստաթղթի տվյալների վերլուծության հիման վրա գնահատող խումբը մշակեց արտաքին դիտարկման և գնահատման գեկույց՝ դեպարտամենտի 10 տարվա գործունեության ընդհանուր գնահատականով և առաջարկություններով:

Ձեկույցում դեպարտամենտը գնահատվում է որպես արևմտյան չափորոշիչներով առաջնորդվող ագրոբիզնեսի եզակի կրթական կառույց, որը հաջողությամբ ծառայում է շահագրգիռ բոլոր կողմերին: Փաստաթղթում կարևորվում են դեպարտամենտի ուսումնական ծրագրի հաջողության հետևյալ հիմնական գրավականները՝ Տեխասի Էյ ընդ Էմ համալսարանի կողմից ուսումնական պլանների մշակման և վարչական հարցերում աջակցությունը, դեպարտամենտի պետի, պրոֆեսորադասախոսական կազմի և աշխատակազմի բարձր որակավորումն ու պրոֆեսիոնալ, նվիրված աշխատանքը: Արտաքին դիտարկման և գնահատման խումբը արտակարգ ձեռքբերում է համարում մի կողմից արդիական և որակյալ կրթություն ստանալու հարցում ուսանողների շահագրգիռ մոտեցումն ու աշխատասիրությունը և մյուս կողմից նրանց մասնագիտական զարգացման համար անհրաժեշտ բոլոր պայմանների առկայությունը:

Ըստ գնահատող խմբի՝ դեպարտամենտի հաջողությունը չափվում է հետևյալ առանցքային արդյունքներով, բայց չի սահմանափակվում դրանցով.

- *դեպարտամենտի շրջանավարտների 100%-ով մասնագիտական կամ մերձ-մասնագիտական աշխատանքով ապահովվածություն, հիմնականում միջինից բարձր աշխատավարձով,*

- *դեպարտամենտի շրջանավարտների ավելի քան 20%-ը շարունակում են կրթությունը մագիստրատուրայում և ասպիրանտուրայում, մեծ մասամբ՝ ԱՄՆ համալսարաններում,*

- *գործատուների միահամուռ բարձր կարծիքը դեպարտամենտի շրջանավարտների մասնագիտական որակների մասին,*

- *ուսանողների միահամուռ բարձր կարծիքը դեպարտամենտի կրթական ծրագրի բարձր որակի մասին,*

- *արդյունավետ սերտ գործարար կապեր արտադրության ոլորտի հետ՝ հիմնված փոխադարձ հարգանքի ու վստահության վրա,*

- *դեպարտամենտի՝ որպես ագրոբիզնեսի ժամանակակից երկաստիճան բարձրագույն դպրոցի մոդելի, տարածաշրջանային և միջազգային ճանաչումը, մոդել, որի օրինակով հնարավոր է ավանդական կրթական համակարգում ներմուծել արևմտյան նորարարական, կիրառական մոտեցումներ,*

- *բոլոր շահագրգիռ կողմերի շրջանում դեպարտամենտի բրենդի և մշակույթի ճանաչողություն՝ որպես ուսանողակենտրոն, կոռուպցիայից զերծ, ամենարդիական գործարար գիտելիքներին և սխեմաներին հասու կրթական կառույցի:*

Գնահատման փաստաթուղթը տրամադրվել է ԱՄՆ գյուղդեպարտամենտի արտաքին գյուղատնտեսական ծառայությանը, ՀՀ ԿԳ նախարարին, ՀՊԱՀ-ին և դեպարտամենտին:

Արտաքին գնահատումը կարևոր նախնական քայլ է դեպարտամենտի հետագա հավատարմագրման հարցում: Այս պահին դեպարտամենտը ուսումնասիրում է որակի ապահովման համակարգերին և միջազգային հավատարմագրման կառույցներին առնչվող տեղեկատվությունը՝ հետագա քայլերի մշակման նպատակով:

1.5. ՀՊԱՀ Մագիստրատուրա

2010-2011 ուս. տարում ՀՊԱՀ Մագիստրատուրայում 7 որակավորումների 37 մասնագիտություններում սովորել են 627 մագիստրանտներ, որոնցից 56-ը հեռակա ուսուցմամբ, 571-ը ցերեկային ուսուցման մագիստրատուրայում, ընդ որում 298-ը՝ առաջին և 273-ը երկրորդ կուրսերում: Պետ.պատվերով ուսուցման համակարգում մագիստրանտների թիվը կազմել է 158, իսկ վճարովի համակարգում՝ 469: Ըստ մասնագիտությունների 1-ին և 2-րդ կուրսերի մագիստրանտների բաշխումը և եռամսյակային շարժը ներկայացված է աղյուսակներ 5-ում և 6-ում:

ՀՊԱՀ Մագիստրատուրայում դասավանդում են 152 դասախոսներ, որոնցից 89-ը գիտությունների թեկնածու են, 37-ը՝ գիտությունների դոկտորներ:

Բոլոր մագիստրանտների գիտական ղեկավարները ունեն գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտ. աստիճան և ողջենտի կամ պրոֆեսորի կոչում:

2010-2011 ուս. տարվա ընթացքում ՀՊԱՀ Ռեկտորի հրամանով ստեղծված ատեստացիոն հանձնաժողովը յուրաքանչյուր ուս. տարվա ընթացքում 2 անգամ ատեստավորում է մագիստրանտների գիտական գործունեությունը:

2010-2011 ուս. տարվա արդյունքներով առկա բոլոր մագիստրանտները անցել են դրական ատեստավորում և թույլատրվել է նրանց շարունակելու գիտ. աշխատանքը և մասնակցելու քննաշրջաններին: Ըստ քննաշրջանների արդյունքների 1-ին և 2-րդ կուրսերում սովորող մագիստրանտների 85%-ը ստացել են միայն «գերազանց» գնահատականներ:

2010-2011 ուս. տարում ՀՊԱՀ մագիստրատուրան ավարել է 7 մասնագիտական որակավորումների 37 մասնագիտությունների 274 մագիստրոսներ, որոնցից 153 Պետական որակավորման հանձնաժողովի որոշմամբ ստացել են գերազանցության դիպլոմներ:

Միջազգային և միջբուհական փոխանակային ծրագրերով լավագույն մագիստրանտները իրենց ուսումը, կարճաժամկետ կամ երկարաժամկետ, շարունակել և շարունակում են Տեխասի, Ֆրեզնոյի, Վաշինգտոնի (ԱՄՆ) համալսարաններում, «Տեմպուս» ծրագրի շրջանակներում՝ Հոլանդիայի և Գերմանիայի համալսարաններում, Հունաստանում, Գերմանիայի Վայնշտեֆանի համալսարանում:

Ռեսանդների փոխանակային ծրագրերով ՀՊԱՀ Մագիստրատուրան ավարտել են Սիրիայի Արաբական Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներ, ինչպես նաև նախատեսվում է այլ օտարերկյա քաղաքացիների ուսուցման կազմակերպումը ՀՊԱՀ Մագիստրատուրայում:

2003-2004 ուս. տարվանից, GTZ-ի և Գերմանիայի Վայնշտեֆանի համալսարանի աջակցությամբ, միջբուհական համագործակցության արդյունքում, ՀՊԱՀ մագիստրատուրայում իրականացվում է Միջպետական մագիստրոսական ծրագիր «Ագրարային մենեջմենթ» մասնագիտությամբ, որտեղ սովորող 30 մագիստրանտներից 10-ը ուսումը շարունակում են Գերմանիայի Վայնշտեֆանի համալսարանում:

2010-2011 ուս. տարվանից DAAD ֆինանսական աջակցությամբ ՀՊԱՀ մագիստրատուրայում կազմակերպվել է «Ագրարային մենեջմենթ» մասնագիտությամբ գերմանալեզու միջազգային մագիստրոսական ծրագրի ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի նախապատրաստումը: 2011-2012 ուս. տարվանից իրականացվել է գերմանալեզու միջազգային «Ագրարային մենեջմենթ» ծրագրով ընդունելություն, որին մասնակցել են մրցույթային կարգով նախապատրաստական ծրագիրը ավարտած 12 դիմորդները և հաջողությամբ հաղթահարելով Վայնշտեֆանի համալսարանի պրոֆեսորների մասնակցությամբ ընդունելության քննությունը՝ ընդունվել են այդ ծրագրով ուսումը շարունակելու:

2011-2012 ուս. տարվանից TEMPUS միջազգային կրթական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ՀՊԱՀ Մագիստրատուրայում իրականացվում է ուսուցում «Կիրառական կենսաբանություն» մագիստրոսական ծրագրով՝ «Գյուղատնտեսական կենսատեխնո-

լոգիա», «Բնապահպանական կենսատեխնոլոգիա», «Մենդի կենսատեխնոլոգիա» և «Առողջապահական կենսատեխնոլոգիա» մասնագիտացումներով:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՍՎՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՐԵՐ

2.1. Ստեփանակերտի մասնաճյուղ

2011 թվականին ՀՊԱՀ-ի Ստեփանակերտի մասնաճյուղի գործունեությունը կենտրոնացվել է ուսումնական գործընթացի հետագա կատարելագործման վրա, նպատակ ունենալով ԼՂՀ ագրոպարենային համակարգն ապահովել բարձրորակ կադրերով:

Այդ իսկ նպատակով հաշվետու ժամանակաշրջանում (01.01.2011թ-01.01.2012թ) գիտամեթոդական և տնօրինության խորհուրդներում տեղի ունեցած 26 նիստերի ընթացքում քննարկված 91 հարցերից 67-ը, կամ 73.6%-ը՝ վերաբերվել են ուսումնական գործընթացի բարելավմանը:

Մասնաճյուղում ստվերային երևույթներից գերծ մնալու և կոռուպցիոն ռիսկը նվազեցնելու նպատակով ինչպես տնօրինության, այնպես էլ գիտամեթոդական խորհրդների նիստերում պարբերաբար քննարկվել և ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

Մասնաճյուղում ուսումնական գործընթացը, ինչպես բակալավրի այնպես էլ միջին մասնագիտական կրթական ծրագրերի կենտրոնի առկա և հեռակա ուսուցման համակարգերում, իրականացվել է նախկինում մասնագիտական թեքումով ստեղծված 4 բաժինների կողմից, որոնք 2011թ. հունվարից վերակազմավորվել և երկու ֆակուլտետների՝ «Ագրարային տնտեսագիտական և կենսաբանական» ու «Ագրարային ճարտարագիտական և տեխնոլոգիական»՝ երեքական ամբիոններով:

Մասնաճյուղում գործող ուսանողների թիվը առ 01.01.11թ. կազմել է 1318, 30.12.2011թ.՝ 1401 (2010թ համեմատությամբ 200 ուսանողով ավելի):

01.01.2011-01.01.2012թթ կատարվել է մասնագետների թողարկում մագիստրատուրայի չորս, բակալավրի ուսուցման համակարգում չորս և միջին մասնագիտական կրթական ծրագրերի կենտրոնում հինգ մասնագիտությունների գծով, որոնցում ընդգրկված են եղել 220 ուսանող:

01.01.2012թ. դրությամբ մասնաճյուղի դասախոսական կազմը բաղկացած է 66 աշխատողից, որոնցից 2-ը՝ դոկտոր- պրոֆեսոր է , 6-ը՝ դոցենտ, գիտությունների թեկնածու, 8-ը՝ գիտությունների թեկնածու, 50-ը չունի գիտական կոչում և աշխատում է ավագ դասախոսի և ասիստենտի տարակարգով: Ժամավճարային հիմունքներով հրավիրված է 35 դասախոս:

Մասնաճյուղում որոշակի աշխատանք է տարվում դասախոսական կազմը երիտասարդ կադրերով համալրելու ուղղությամբ, արդեն մասնաճյուղի 22 աշխատողներ հայցորդներ են ձև ակերպված ՀՊԱՀ-ի տարբեր ամբիոններում:

2011 թվականի նոյեմբերից մասնաճյուղում գործում է հեռավար ուսուցման կաբինետը: Այն ստեղծվել է «Փյունիկ» հիմնադրամի նախագահ Լ.Սարգսյանի և ՀՊԱՀ հորհրդի անդամ և ՀՊԱՀ-ի խորհրդի անդամ Ս.Սարգսյանի աջակցությամբ:

2.2. Սիսիանի մասնաճյուղ

ՀՊԱՀ Սիսիանի մասնաճյուղում բակալավրային համակարգում գործում է ուսուցման հեռակա ձևը:

Մասնաճյուղի հեռակա ուսուցման մասնագիտությունների ցանկը հետևյալն է.

- «Ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում» I, II, III, IV, V կուրսեր,
- «Ագրոպարենային համակարգի հաշվապահական հաշվառում և աուդիտ» II, V կուրսեր,
- «Հողաշինարարություն և հողային կադաստր» I, II, III, IV, V կուրսեր,
- «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» III, IV, V կուրսեր,
- «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն» II, III, IV, V կուրսեր,
- «Ագրոնոմիա» I, II, III, IV, V կուրսեր:

Մասնաճյուղի հեռակա ուսուցման համակարգում սովորում են 322 ուսանողներ:

Հաշվետու տարվա ընթացքում մասնաճյուղն ավարտել են 42, ընդունվել՝ 28 ուսանողներ:

2.3. Վանաձորի մասնաճյուղ

Հաշվետու ժամանակահատվածում ՀՊԱՀ-ի Վանաձորի մասնաճյուղում կատարվել են աշխատանքներ ուսումնական գործընթացը համալսարանի ռեկտորատի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան և բավարար մակարդակով կազմակերպելու, ուսուցման որակն ապահովելու, ուսումնական բազան լաբորատոր սարքավորումներով և նյութերով համալրելու ուղղությամբ: Մասնաճյուղում ուսումնական գործընթացը ամբողջությամբ կազմակերպվում է մայր բուհ-ի հեռակա ուսուցման ղեկարտամենտի կրթական չափորոշիչներին համապատասխան:

2012թ. հունվարի 1-ի դրությամբ մասնաճյուղի ուսանողների ընդհանուր թիվը կազմել է 446 ուսանող, որից 63-ը գտնվում են գինվորական ծառայության մեջ: Տարվա ընթացքում մայր բուհ-ից մասնաճյուղ են տեղափոխվել 6 ուսանողներ, այլ բուհերից (քոլեջներից) 6 ուսանող: Ուսումնական ծրագրերը չկատարելու պատճառով մասնաճյուղից հեռացվել են **14** ուսանող: 2011թ-ին հեռակա ուսուցմամբ մասնաճյուղի առաջին կուրս են ընդունվել 57 ուսանող:

3. ՀԱՎԱԿՈՒՈՒՊՑԻՈՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հակակոռուպցիոն ծրագրի իրականացման շրջանակներում վերջին տարիներին համալսարանում հատկացվել և հատկացվում է մեծ ուշադրություն:

ՀՀ կրթության և գիտության նախարարության «Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012 թվականների համալիր գործողությունների ծրագրի» համաձայն կազմվել և նախարարություն է ներկայացվել նշված ոլորտում ագրարային համալսարանի ծրագիրը և դրվել գործողության մեջ:

Ուսանողների և դասախոսական կազմի տեղեկացվածության և մասսայականացման նպատակով 2011 թվականի հոկտեմբերին հակակոռուպցիոն ծրագիրը ամբողջությամբ հրատարակվել է համալսարանի «Հասկ» պաշտոնաթերթում և տրամադրվել ուսանողներին և բոլոր աշխատակիցներին:

Այս տեսանկյունից, ինչպես արդեն նշվել է նախկինում, համալսարանում բազմաթիվ քայլեր են ծրագրավորվել և կյանքի կոչել, արմատախիլ անելու և (կամ) կանխարգելելու այդ երևույթը:

Առաջին հերթին առկա ուսուցման համակարգում բոլոր քննությունները կազմակերպվել և իրականացվել են միայն գրավոր և հանձնաժողովներով, որում ընդգրկված են ռեկտորատի, ֆակուլտետների ղեկանատների, ամբիոնի վարիչների, ուսանողական խորհրդի և կրթության ներդրման վերահսկողական հանձնաժողովի անդամները: Քննությունները կազմակերպվում են բաց և թափանցիկ, որոնց մասնակից են դառնում նաև ուսանողների ծնողները, լրատվական միջոցները, իսկ վերջին տարիներին՝ նաև գործատուներ:

Հատկանշական է, որ այս մեթոդի ներդրման տեսանկյունից, ներդրվել է նաև բողոքարկման կարգը: Ակնհայտ է, որ առկա ուսուցման համակարգում քննությունների անցկացման նման համակարգի ներդրումը, երբ բոլոր ուսանողների գնահատականները բաց քննարկվում է ուսանողների հետ և նոր գրանցվում տեղեկագրերում, հանգեցրել են լուրջ դրական արդյունքների: Ուսանողների բողոքարկման դեպքում (որոնք յուրաքանչյուր կիսամյակում լինում են 2-3 դեպք), երբ ուսանողը համաձայն չէ գնահատականի հետ, գրավոր աշխատանքը ուղարկվում է փորձաքննության(ների) որից հետո իրականացվում է համապատասխան գործառույթ: Ըստ որում, ուսանողը տեղեկացվում է, որ փորձաքննության արդյունքների համաձայն գնահատականը կարող է բարձրանալ, պահպանվել կամ իջեցվել:

Հիմք ընդունելով ցերեկային ուսուցման համակարգում վերջին տարիներին ներդրված այս միջոցառումների դրական արդյունքները (կոռուպցիայի կամ կաշառակերության դեմ պայքարում), այս ուսումնական տարում այն ներդրվեց նաև հեռակա ուսուցման համակարգում, որի դրական արդյունքները ևս շոշափելի են: Ընդ որում հեռակա ուսուցման համակարգում ոչ միայն քննություններն են ընդունվում հանձնաժողովներով, այլ դրանց նախորդող ստուգողական և կուրսային աշխատանքները (նախագծերը):

Շուրջ 10 տարի է, ինչ յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո ուսումնական աշխատանքները համակարգողների, ղեկանատների և ուսանողական խորհրդի ներկայացուցիչների հետ համատեղ իրականացվում է բոլոր դասախոսների անանուն գնահատում ուսանողների կողմից, որոնց արդյունքում ձեռնարկվել են հատուկ միջոցառումներ:

Մյուս կողմից, ուսանողներին հուզող, հետաքրքրող բոլոր հարցերը, առանց որևէ դասախոսի կամ ղեկանատի ներկայացուցիչների մասնակցության, ռեկտորը անձամբ

յուրաքանչյուր կիսամյակ հանդիպում է կազմակերպում խումբ մասնագիտությունների ուսանողների հետ, որտեղ գնում է բաց քննարկում, հարցերի պարզաբանում: Որից հետո հանդիպումների արդյունքները ներկայացվում են ռեկտորատում և իրականացվում օպերատիվ միջոցառումներ: Միաժամանակ ավանդույթ է դարձել ուսանողների ծնողների հետ հանդիպումների կազմակերպումը, հատկապես վատ հաճախող և ոչ բավարար առաջադիմություն ցուցաբերող ուսանողների ծնողների հետ, որոնք մասամբ տալիս են դրական արդյունքներ:

Այս ուսումնական տարվա առաջին կիսամյակում քննարկվել և ՀՊԱՀ իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնի առարկաների ծրագրում ընդգրկվել և տարբեր մասնագիտությունների և կուրսերի ուսանողների հետ անցկացվել են դասախոսություններ «Մարդու իրավունքների ինտեգրումը. հակակոռուպցիոն օրակարգ, մարտահրավերները, հնարավորություններն ու կարողությունները» ծրագրի շրջանակներում հետևյալ թեմաներով.

1. *Մարդու իրավունքների ծառայությունների մատուցման մակարդակը՝ հասանելիության, մատչելիության, ընդունակության, հաշվետվողականության և պարտադրման մեխանիզմը* (Պ. Մերոբյան, Ա. Մելքումյան, Լ. Վահրամյան, Ի. Նիկողոսյան, Ռ. Բրգանունց)
2. *Կոռուպցիոն բնույթի իրավախախտումները և դրանց պատժելիությունը*
3. *Հակակոռուպցիոն պայքարի չափորոշիչները:*

Այս ծրագիրը իրականացնելիս հաշվի է առնվել նաև USAID (25.08.2011թ.) կողմից մշակված «Մարդու իրավունքների քաղաքականության և միջազգային խորհրդի (ՄԻՔՄԽ) և ԱՄՆ ՄՉԳ հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման (ՀԳՄԾ) ծրագիրը:

Համալսարանի կողմից ներդրված միջոցառումների, ինչպես նաև կրեդիտային համակարգով կրթության իրականացման արդյունքում առկա են շոշափելի ձեռքբերումներ: Այդուհանդերձ, հակակոռուպցիոն ծրագրերի ներդրումներն ընդհանուր առմամբ են մարտահրավերներ, աշխատել ավելի արդյունավետ, նվազեցնելու կամ արմատախիլ անելու կաշառակերությունը (կառուպցիան), վերանայել գործունեության ուղղություններն ու մոտեցումները, նվազագույնի հասցնել բոլոր ռիսկերը, որոնք առավել արդյունավետ լուծումներ, քննարկումները դարձնել թափանցիկ և մասսայական:

Այս առումով առավել ինտենսիվ պետք է աշխատի համալսարանի ուսանողական խորհուրդը: Ըստ ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի հարցման տվյալների (2009-2010թ.) Հայաստանի ուսանողների միայն 40 % է վստահության քվե տալիս ուսանողական խորհուրդներին: Մեր համալսարանի ուսանողների շուրջ 50 % է վստահում ուսանողական խորհրդին, որպես իրենց շահերը պաշտպանող, որը ուսանողները հիմնավորել են նրանով, որ եղել են նման բազմաթիվ դեպքեր:

Իսկ այն հարցին, թե «Եթե խախտվեն ուսանողի իրավունքները, ինչ կանի ուսանողը» համալսարանի ուսանողների շուրջ 45%-ը պատասխանել է կղիմեմ համալսարանի ղեկավարությանը, շուրջ 17%-ը կղիմի ուսանողական խորհրդին և միայն 12% կղիմի ծնողներին:

Հիմք ընդունելով նաև նման հարցումների արդյունքները համալսարանի ուսանողական խորհուրդը 2012-2013 թվականին պետք է բացի ուսանողական խորհրդի ինտերնետային կայք, պատրաստի հաղորդակցությունների պաստառներ (ստենդ) կամ օգտագործի այլ միջոցներ, ինչպիսիք են լրագրերը, «Ուսանողական հայացք» թերթը կամ նորությունների ստենդներ, որոնք հասանելի կլինեն բոլոր ուսնողներին և պարբերաբար կթարմացվեն լուրերով, իրադարձություններով և ուսանողական խորհուրդների գործունեության մասին այլ կյուրերով:

2012 թվականին, բացի վերը նշված միջոցառումներից առարկայական ծրագրերում ուսանողների համար պլանավորվում է դասախոսություններ կարդալ 6 ժամ տևողությամբ հետևյալ թեմաներով:

1. Կոռուպցիան և դրա դեմ ազատ արտահայտվելու իրավունքները (2 ժամ):
2. Պայքար կոռուպցիայի և հովանավորչության դեմ (2 ժամ):
 - ա) Կրթության իրավունքների ազատականացումը,*
 - բ) սոցիալական իրավունքների բարելավումը,*
 - գ) առողջապահության իրավունքի բարելավումը:*
3. Պայքար թրաֆիքինգի դեմ (2 ժամ)
 - ա) մարդկանց շահագործման վերացումը,*
 - բ) կանանց թրաֆիքինգի դեմ պայքարի ձևերը:*

Ծրագրավորվում է իրականացնել նաև ներդրված միջոցառումների հետևողական վերահսկողություն, վերլուծություն և հաշվետվողականություն:

Այս բոլորով հանդերձ, բարձրագույն կրթության համակարգում կաշառակերության վերացման (սվազագույնի հասցնելու) գործընթացը պետք է ընդունվեն համակարգի երկու եզրերի՝ ուսանողության և դասախոսության կողմից: Երկու կողմերն էլ պետք է շահագրգռված և հետաքրքրված լինեն լիովին ներգրավվելու այս գործընթացին, խրախուսեն մեկը մյուսին և միևնույն ժամանակ վերահսկեն միմյանց գործունեության արդյունավետությանը:

Մեր կարծիքով միայն այս դեպքում կարելի է հասնել հաջողությունների, ինչին էլ միտված են մեր կոլեկտիվի բազմակողմանի աշխատանքները:

4. ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ, ՈՐԱԿԻ ԱՊԱՅՈՎՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՅՍԿՄԱՆ, ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՅՍՏՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐ

Վերջին տարիներին համալսարանում իրականացվող կրթական, գիտական ու խորհրդատվական գործընթացները, կրեդիտային համակարգով կրթության կազմակերպումը և որակի ապահովման ներհամալսարանական համակարգի ներդրումը կատարվում են ՀՀ կառավարության, Կրթության ու Գիտության նախարարության որոշումներին ու հանձնարարականներին համապատասխան և համահունչ են Բոլոնիայի հռչակագրի ու ՀՀ կրթության զարգացման պետական ծրագրի դրույթներին և բավարարում են ՀՀ Որակավորումների ազգային շրջանակների պահանջներին:

2006թ.-ին համալսարանում Բոլոնիայի գործընթացի սկզբունքներին համապատասխան կազմվեց և հաստատվեց կրթահամակարգի բարեփոխումների և համալսարանում կրեդիտային համակարգի ներդրման համալիր ծրագիր և ժամանակացույց, որտեղ ներառվեցին շուրջ 32 կետից բաղկացած գործողությունների ցանկ:

2008թ.-ից համալսարանում մշակվեց ու ներդրվեց ուսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային-ռեյթինգային համակարգը, որով ուսանողների գնահատումը իրականացվում է 20 և 100 բալային համակարգով: Այդ համակարգը նպատակաուղղված է ուսանողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ստուգման և գնահատման առավել օբյեկտիվ, թափանցիկ ու արդյունավետ գործընթացի կազմակերպմանը՝ լայնորեն կիրառելով դիագնոստիկ, ֆորմատիվ (ընթացիկ կամ ձևավորող) և սումատիվ (ամփոփիչ) գնահատումները:

2008թ.-ից մշակվեցին և ներդրվեցին ուսանողների նոր ակադեմիական տեղեկագրերը, որոնցում կիսամյակային քննությունների արդյունքներից հետո ներառվում են ուսանողների վաստակած գումարային կրեդիտների քանակը (Կ), գնահատված կրեդիտների քանակը (ԳԿ), վարկանիշային միավորը (ՎՄ) և միջին որակական գնահատականը (ՄՈԳ):

Համալսարանի համար շատ կարևոր նշանակություն ունեցավ ՀՊԱՀ-ի և ԱՄՆ գյուղդեպարտամենտի Կովկասի գյուղատնտեսության զարգացման ծրագրի համատեղ իրականացվող քառամյա ծրագիրը, որտեղ որպես ծրագրի հիմնական համակարգող հանդես էր գալիս Տեխասի Գյուղատնտեսության և մեքենայացման (A&M) համալսարանը, իսկ համագործակցող բուհերն էին ԱՄՆ Նյումեքսիկայի, Օկլահոմայի, Փենսիլվանիայի և Վաշինգտոնի նահանգային համալսարանները:

Այս ծրագրի նպատակն էր աջակցել ՀՊԱՀ-ին անցում կատարել Բոլոնիայի հռչակագրի դրույթներին և ԵԿԲՏ չափանիշներին՝ համապատասխան կրթություն կազմակերպելու համար:

Ծրագրի շրջանակներում Ամերիկյան համալսարանների 10 մասնագետների կողմից մեծ աշխատանքներ տարվեցին համալսարանի շուրջ 300 դասախոսների համար դասընթացներ անցկացնելու և մեթոդական օժանդակության ցույց տալ հարցերում:

Ամերիկյան գործընկերների աջակցությամբ համալսարանի ուսումնամեթոդական կենտրոնի, ֆակուլտետների և պրոֆեսորադասախոսական կազմի կողմից մեծ ծավալի աշխատանքներ տարվեցին կրեդիտային հենքով ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի, ECTS դիպլոմի միջուկների և դիպլոմի հավելվածի մշակման, դասախոսական կազմի համակարգչային և անգլերեն լեզվի հմտությունների ձեռքբերման և ուսանողների ու դասախոսների շարժունության ապահովման ուղղությամբ:

ՀՊԱՀ-ի համար շատ կարևոր նշանակություն ունեցան նաև Եվրոմիության «ՏԵՄՊՈՒՍ-ի» իրականացված ծրագրերը, որոնց շրջանակներում սկսած 2000թ.-ից համալսարանը մի քանի արդյունավետ ծրագիր իրականացրեց:

2010թ.-ի գարնանը ՀՊԱՀ-ն 7-ը արտերկրյա համալսարանների հետ համատեղ աշխատանքներ սկսեց Եվրոմիության «ՏԵՄՊՈՒՍ-4» ծրագրի շրջանակներում «Կիրառական կենսաբանական գիտություններ» թեմայի իրականացմանը, որի նպատակն է նոր մագիստրոսական ուսումնական ծրագրերի ներդրումը վրացական և հայկական համալսարաններում:

Նոր մագիստրոսական ծրագիրը կնպաստի զարգացնել Կիրառական կենսաբանական գիտությունների մագիստրական դասընթացը պարենի, գյուղատնտեսական, առողջապահական և շրջակա միջավայրի կենսատեխնոլոգիաների ոլորտներում:

Ծրագրի արդյունքում ՀՊԱՀ-ն կունենա նոր մագիստրոսական դասընթաց, համապատասխան լաբորատոր բազա, Եվրոպական բուհերի հետ համաձայնեցված ուսումնական պլաներ ու առարկայական ծրագրեր և դասավանդման մեթոդներ:

Մագիստրոսների գիտելիքների գնահատումը և կրեդիտների հատկացումը, նույնպես կատարվելու է Եվրոպական չափանիշներին համապատասխան, որն էլ կնպաստի ուսանողների շարժունությանը:

2011թ.-ի դեկտեմբերի այս ծրագրի շրջանակներում մշակվեցին ու հաստատվեցին մագիստրոսական չորս մասնագիտացումների ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը:

2010թ.-ին ՀՊԱՀ-ի, Շվեդիայի, Իսպանիայի, Գերմանիայի, Ուկրաինայի, Մոլդովայի և Հայաստանի այլ 10 համալսարանների հետ համատեղ «ՏԵՄՊՈՒՍ-5» ծրագրի շրջանակներում «Աշխարհագրական տեղեկատվական տեխնոլոգիան Արևելյան հարևանության կայուն զարգացման համար» անվանումով ծրագրի իրականացման արդյունքում Հողաշինարարության և Հողային կադաստրի ամբիոնում հիմնադրվեց GIS (Աշխարհագրական տեղեկատվական համակարգերի) լաբորատորիա, ինչպես նաև հնարավորություն ստեղծվեց ուսումնական պլանների կազմման և անձնակազմի վերապատրաստման ուղղությամբ:

Կրթական բարեփոխումների արդյունավետ իրականացման նպատակով համալսարանը համագործակցում է նաև Շվեդիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի և Յուլանդիայի առաջատար ագրարային համալսարանների հետ:

2011թ.-ին ՀՊԱՀ-ն մրցույթային կարգով ընդգրկվեց ՀՀ Կրթության և Գիտության նախարարության կողմից հայտարարված «Կրեդիտային կուտակման և փոխանցման համակարգի բարելավում՝ որպես շարժունությունն ապահովող և Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրման կարևոր գործիք» թեմայով դրամաշնորհային ծրագրում:

2011թ.-ի հունվարից համալսարանում ինքնավերլուծության և ինքնագնահատման իրականացման ուղղությամբ կատարվել են մի շարք աշխատանքներ.

- *Մասնագիտական Կրթության Որակի Ապահովման Ազգային Կենտրոն հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից առաջարկված և ՀՀ Կառավարության կողմից հաստատված ենթակառուցվածքային հավարամագրման չափանիշներին ու չափորոշիչներին համապատասխան իրականացվել է ինքնավերլուծության գործընթացների նախապատրաստում, մասնավորապես քարտեզագրում և գույքագրում: Սահմանված չափանիշներից յուրաքանչյուրի վերաբերյալ կատարվել է հիմնական առկա փաստաթղթերի, տվյալների և տեղեկատվության հավաքագրում:*

2011թ.-ի հոկտեմբերին համալսարանի գիտական խորհրդում լսվեց և քննարկվեց «ՀՊԱՀ-ի գործունեության ինքնավերլուծության նախապատրաստման և իրականացման

վիճակը և խնդիրները» հարցը, որի կապակցությամբ ընդունվեց համապատասխան որոշում և համապատասխան կառույցներին տրվեցին համապատասխան հանձնարարականներ:

2011թ.-ի դեկտեմբերի համալսարանը մասնակցեց պետական բարձրագույն ոսումնական հաստատությունների ռեկտորների խորհրդի կողմից Շաղկաձորում կազմակերպված սեմինար խորհրդակցությանը և զեկուցումներ ներկայացրեց «Քնահատման համակարգեր», «Որակի ապահովում և հավատարմագրում» և «Պրակտիկաների խնդիրները» թեմաներով:

2011թ.-ի դեկտեմբերին համալսարանի երկու աշխատակիցներ մասնակցեցին «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի և ՀՀ ԿԳ նախարարության կողմից, Աղվերանում կազմակերպված «Որակի ներքին ապահովումը ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում. Մարտահրավերներ ու հեռանկարներ» թեմայով ֆորումին և վերապատրաստումներ անցան «Որակի ապահովման արտաքին մեխանիզմներ», «Որակի ապահովման ներքին համակարգ» և «Ինքնագնահատում՝ իրականացման մեխանիզմներ և զեկույցի պատրաստում» թեմաներով:

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2011թ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համալսարանում իրականացվող գիտահետազոտական ծրագրերի հիմնական ֆինանսավորման աղբյուրը 2011թ. (ինչպես նախորդ տարիներին) մնում է հանրապետության պետական բյուջեն, որից «Գիտական գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» բազային բաղադրիչով ֆինանսավորվում է 92 հաստիքով 75,44 միլիոն դրամ, ինչպես նաև գիտական աստիճանների համար հավելավճար մոտ 15,0 միլիոն դրամ ծավալներով:

2011 թ. բազային ֆինանսավորմամբ 2010 թ. համեմատությամբ հաստիքների թիվն ավելացել է 18-ով ֆինանսավորմը 23,93 միլիոն դրամով: Պետական բյուջեից տրամադրված ֆինանսական միջոցներից աշխատավարձի ֆոնդը կազմել է մոտ 88%:

Ընդհանուր առմամբ համալսարանի գիտնականների կողմից վերջին տարիներին մշակել փորձարկվել և արտադրությունում փորձնական ներդրվել են տարբեր ոլորտների և ուղղությունների 15 նորագույն տեխնոլոգիաներ և 16 մեքենաներ ու սարքավորումներ: Դրանք լիարժեք պատրաստ են գյուղատնտեսական արտադրությունում ներդնելու համար:

Դրանք են.

- Գյուղատնտեսության արտադրությունում ներդրման պատրաստ տեխնոլոգիաներ

1. Դացիտային տուֆի հիմքի վրա կալիում, ազոտ և միկրոտարրեր պարունակող համակացված պարարտանյութերի արտադրության և կիրառման տեխնոլոգիաներ:

2. Նոր բաղադրության օրգանահանքային պարարտանյութերի (կոմպլեքսոն) արտադրության տեխնոլոգիա:

3. «Ֆենագոն» և «Գերաֆեն» (սեւպերֆենագոն) հիբրիցիդների արտադրության տեխնոլոգիա:

4. «Տրիսուրոն» ֆունգիցիդի արտադրության տեխնոլոգիա:

5. «Գլիֆեն» և «Կոլաֆեն» հիբրիցիդային արտադրության տեխնոլոգիա:

6. Տեխնաժին ադտոտված (ծանր մետաղներով) հողատարածություններից էկոլոգիապես մաքուր բուսաբուծական մթերքների արտադրության տեխնոլոգիա:

7. Տավարի սինթետիկ պոպուլյացիայի ընտրասերմամբ կատարելագորման նոր տեխնոլոգիա:

8. Նոյեմբերյանի բնական ցեոլիտի օգտագործումը, որպես գյուղատնտեսական կենդանիների հանքային լրացակերի տեխնոլոգիա:

9. Իջևանի բենտոնիտային կավը որպես խոզերի և թռչունների հանքային սնման և մթերատվության բարձրացման արդյունավետ տեխնոլոգիա:

10. Կլինիկայի փոշին որպես ծղոտի սննդարարության բարձրացման արդյունավետ տեխնոլոգիա:

11. «Նաիրի» փորձանյութը որպես կովերի և կանանց գաղտնի ընթացող մաստիտը ախտորոշելու տեխնոլոգիա:

12. Հակասիբիրախտային հեղուկ վակցինայի արտադրության տեխնոլոգիա:

13. Խտացված հիդրոքսիդ ալյումինային ֆորմոլ վակցինայի արտադրության տեխնոլոգիա խշխշան պալարի նկատմամբ:

14. Հակապաստերելյոզային գերիմուն շրճուկի արտադրության տեխնոլոգիա խ.ե.կ. և խողերի պաստերելյոզի նկատմամբ:

15. Հյուսվածքային վակցինայի արտադրության տեխնոլոգիա շագարների վիրուսային արյունահոսային հիվանդությունների նկատմամբ:

- Գյուղատնտեսական արտադրությունում ներդրման պատրաստ մեքենասարքավորումներ

16. Ֆերմերային տնտեսությունների համար կենսագազային 10-30մ³ հզորությամբ տեղեկայանքներ (տաքացման այլընտրանքային աղբյուրների օգտագործմամբ):

17. Գոմաղբից ու թռչնաղբից օրգանական պարարտանյութերի պատրաստման արագացված (7-10 օր) ֆերմենտացմաբ աերոբային տեղակայանք:

18. Կոպիտ կերերի (խոտ, ծղոտ) մանրացման փոքրաչափ մեքենա (2.2կՎտ էլեկրաշարժիչով):

19. Խտացրած կերի (եգիպտացորեն, գարի, կտարեկան, վարսակ) մանրացման փոքրաչափ մեքենա (0.5; 1.0; 2.2կՎտ էլեկրաշարժիչով):

20. Օրգանական և հանքային կերերի մանրացման փոքրաչափ ունիվերսալ մեքենա (0.5; 1.0; 2.2կՎտ էլեկրաշարժիչով):

21. Մոտոբլոկի հետ ագրեգատավորվող կեմպլեքսայի սրսկիչ:

22. Խաղողի միջվազային մշակության մեքենա:

23. Խաղողի այգեբացի մեքենա:

24. Հիդրոպլանմատիկ շարքացան մանրահատիկ ներմերի ցանքի համար:
25. Փոքրածավալ ռոտացիան հնձիչ:
26. Մրգակորիզների վերամշակման մեքենասարքավորումներ (ջարդիչ, տեսկավորիչ, տեսակազատիչ):
27. Սևնդարոյունաբերական թափոնների բրիկետավորման տեղակայանք:
28. Սպիրտահատիկային տակուցքի վերամշակման հոսքագիծ:
29. Մրգակորիզներից և այլ բուսասերմերից բուսական յուղի արտադրության հոսքագիծ:
30. Պտուղ բանջարեղենի համակցված չորացման տեղակայանք:
31. Բնքկան եղանակով չորացված ծխախոտի խոնավացման տեղակայանք:

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՍԱԼՍԱՐԱՆԻ (ՀՊԱՀ) ՄՅԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ 2011թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ

2011 թ. շարունակվեց համագործակցությունը Գերմանիայի դաշնության Կասսելի համալսարանի և «Ֆեիր» ընկերության հետ ՀՊԱՀ-ի «Բալախովիտ» ուսումնա-փորձնական տնտեսությունում վերաշահագործված կաթի վերամշակման արտադրության և բիոկոմպոստի փորձագիտական աշխատանքների իրականացման ոլորտներում: Կասսելի համալսարանից և «Ֆեիր» ընկերությունից հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են թվով չորս այցելություններ, որոնց ընթացքում ուսումնասիրություններ են կատարվել ինչպես կաթի վերամշակման արդյունքում առաջացող թափոնների, այնպես էլ կենցաղային աղբից ստացված կոմպոստի օգտագործման արդյունավետության հետ կապված: 2011թ նոյեմբեր ամսին տնտեսություն այցելեց Գերմանիայի Բունդեստագի պատգամավորը՝ ուղեկցող մասնագետներով, որոնք բարձր գնահատեցին կատարված աշխատանքները և նշվեց հետագա համագործակցության անհրաժեշտությունը:

2011թ. Սեպտեմբերի 21-28-ը ՀՀ պատվիրակությունը պաշտոնական այցելություն ունեցավ Գերմանիայի դաշնության Բավարիայի երկրամաս՝ այդ երկրամասի Կրթության և մշակույթի նախարարության, ինչպես նաև պառլամենտի Կրթության և մշակույթի հանձնաժողովի հրավերով: Հանդիպումների ընթացքում երկուստեք բարձր են գնահատել ՀՊԱՀ-ի և ԳԴ Վայհենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանի, ինչպես նաև ՀՊԱՀ-ի և GIZ-ի, ՀՊԱՀ-ի և DAAD-ի համագործակցության ծրագրերը: Նշվել է, որ անհրաժեշտություն կա համագործակցությունը զարգացնել, ուշադրություն դարձնելով, հատկապես միջին մասնագիտական կրթական ծրագրերին, ինչպես նաև ՀՀ բուհական կրթահամակարգը Եվրոպականին մերձեցնելուն: Այս ուղղություններով աշխատանքն արդյունավետ և առարկայական դարձնելու նպատակով ՀՊԱՀ-ի Արտաքին կապերի ջանքերով պատրաստվեց ՀՀ ԿԳ և Բավարիա երկրամասի Կրթության և մշակույթի նախարարությունների համագործակցության պայմանագիր, որը հավանություն է արժանացել ՀՀ ԿԳ-ի կողմից և ուղղարկվել է գերմանացի գործընկերների հաստատմանը: Չուզահեռ

աշխատանքներ են տարվում այցի ընթացքում քննարկված Եվրոմիության TWINNING ծրագրին համատեղ հայտ ներկայացնելու ուղղությամբ:

Շարունակվում է ԶՊԱԶ-ի երկարաժամկետ համագործակցությունը Գերմանիայի Վալհենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանի հետ՝ «Կրթության և վերաորակավորման աջակցում հարավկովկասյան երկրներում»՝ 2011թ ընթացքում շարունակվեց՝ 2010թ.Մայիս ամսին կնքված նոր միջբուհական պայմանագրով, որը վավեր է երեք տարի և ժամկետը լրանալուց հետո կարող է երկարացվել ևս մեկ տարով: Ծրագրի լավագույն արդյունքը, Եվրոպական կրթական չափանիշներին համապատասխան «Ագրարային մենեջմենտ» մագիստրոսական ծրագրերի ներդրումն է:

2011թ. շարունակվեց համագործակցությունը Գերմանական LOGO կազմակերպության հետ՝ ԶՊԱԶ ուսանողների արտադրական պրակտիկան Գերմանիայի Դաշնությունում կազմակերպելու վերաբերյալ: Այս ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում պրակտիկա են անցել 2 ուսանողներ: Այս համաձայնագրով պրակտիկա անցած լավագույն ուսանողները (սովորաբար պրակտիկայի տևողությունը 6 ամիս է) կարող են շարունակել Վալհենշտեֆանի կիրառական գիտությունների կամ այլ գերմանական համալսարանի մագիստրատուրաներում և ստանալ գյուղատնտեսության մագիստրի կոչում: Այս ծրագրի կարևորությունը նրանում է, որ ագրարային ոլորտի գրեթե բոլոր ուսանողները, մագիստրանտները և ասպիրանտները կարող են մասնակցել:

2011 թ. ԶՊԱԶ-ն շարունակեց աշխատանքները թվով 4-րդ Եվրոմիության «Տեմպուս» ծրագրի իրականացման ուղղությամբ: «Կիրառական կենսաբանական գիտություններ» (պաշտ. հապավումը - MAPB-159340-TEMPUS-1-2009-1-ES-TEMPUS-JPGR) ծրագրի նպատակն է կենսատեխնոլոգիական մագիստրոսական ուսումնական ծրագրերի ներդրումը վրացական և հայկական համալսարաններում: Մասնավորապես ԶՊԱԶ-ի համար ծրագրի շրջանակներում կազմվել են «Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա», «Սննդի կենսատեխնոլոգիա» և «Շրջակա միջավայրի պահպանության կենսատեխնոլոգիա» մասնագիտացումների ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը՝ Եվրոպական կրթական չափորոշիչներին համապատասխան:

2011 թ. ԶՊԱԶ-ն շարունակեց «Աշխարհագրական տեղեկատվական տեխնոլոգիան Արևելյան հարևանության երկրների կայուն զարգացման համար», պաշտ. հապավումն է GIDEC, իսկ կոդը՝ 511322-TEMPUS-1-2010-SE-JPCR Եվրոմիության թվով 5-րդ «Տեմպուս» ծրագրի իրականացումը: Ծրագրի ամենամեծ ձեռքբերումը 2011 թ. Նոյեմբերի 17-ին ԶՊԱԶ-ում Աշխարհագրական տեղեկատվական համակարգերի լաբորատորիայի բացումն էր:

Եվրոհանձնաժողովի կողմից 2010 թ. ընթացքում երկարացվեց «Էրասմուս Մունդուս համագործակցության պատուհան Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի համար - Գործողություն 2»- ծրագրի իրականացումը:

ԶՊԱԶ-ի նոր և աճող համագործակցություն կարելի է համարել Եվրոպական հանձնաժողովի կողմից հաստատված «ԻՍԵԿԻ-Մունդուս 2» - Սննդի ցանցի ինտերնացիոնալիզացիա և կայունություն ծրագիրը: Ծրագրի նպատակն է՝

- *աջակցել սննդի վերաբերյալ Եվրոպական բարձրագույն կրթության ինտերնացիոնալիզացիային և որակի բարելավմանը,*

- սննդի ոլորտում միջազգային համագործակցության և շարժունակության զարգացումը,
- սննդի ոլորտում նորամուծական ուսուցողական նյութերի պատրաստում,
- համատեղ ծրագրերի իրականացում (Տենպուս, Շրջանակային ծրագիր (FP7) և այլն):

Ծրագրի տևողությունը 3 տարի է (01.11. 2008 թ.-ից մինչև 30. 09. 2011թ): Ծրագիրը համակարգում է Պորտուգալիայի կաթոլիկ Համալսարանի Կենսատեխնոլոգիայի Քոլեջը: Այս նախագծի արդյունքներն են՝ տվյալների միասնական բազայի ստեղծում, վերլուծական զեկույցներ, ուղեցույցներ, դասավանդման նյութեր և մեթոդներ (ներառյալ գրքեր և էլեկտրոնային ուսուցման դասընթացներ):

2011 թ.-ի ընթացքում շարունակվեց սերտ համագործակցությունը ՌԴ Տիմիրյազևի անվ. Պետական ագրարային համալսարանի, Մոսկվայի անասնաբուժական բժշկագիտության և կենսատեխնոլոգիայի պետական ակադեմիայի և Մոսկվայի ագրոնարտարագիտական պետական համալսարանի հետ:

ՀՊԱՀ-ն բացի կրթական-գիտական ծրագրերից իրականացրել և իրականացնում է բազմաթիվ հետազոտական ծրագրեր հետևյալ կազմակերպությունների հետ՝ Միջազգային գիտա-տեխնիկական կենտրոն (ICTI), Ֆրեզնոյի համալսարան, Նիդեռլանդների գյուղական վայրերի զարգացման միջազգային կենտրոն (ICRA), Հյուսիս ատլանտյան դաշինք (NATO) կազմակերպության «Գիտություն հանուն խաղաղության» ծրագիր, Էստոնիայի գյուղատնտեսական հետազոտությունների կենտրոն, «Բիովերսիթի» միջազգային կազմակերպություն (Հռոմ), ՄԱԿ-ի Պարենամթերքի և գյուղատնտեսության կազմակերպություն (FAO), Չորային շրջաններում գյուղատնտեսության վարման միջազգային կենտրոն (ICARDA) և մի շարք այլ միջազգային, տարածաշրջանային և հանրապետական կենտրոններ:

Ուսանողների և պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի շարժունակությունը 2011թթ. ընթացքում: ՀՊԱՀ-ից արտասահմանյան տարբեր բուհեր և կազմակերպություններ իրականացվել են շուրջ 50 այցելություններ: Արտասահմանյան բուհերից և հիմնարկներից այդ նույն ժամանակամիջոցում ՀՊԱՀ են այցելել 80-ից ավելի ուսանողներ, մագիստրանտներ, դասախոսներ, պրոֆեսորներ և այլ աշխատակիցներ:

Ներկայումս ՀՊԱՀ-ի ստացիոնար ուսուցման համակարգում սովորում են շուրջ 40 օտարերկրյա քաղաքացիներ Վրաստանից, Ռուսաստանի Դաշնությունից և Թուրքիայից:

ՀՊԱՀ հեռակա ուսուցման համակարգում նույնպես սովորում են շուրջ 40 օտարերկրյա քաղաքացիներ՝ Վրաստանից, Ռուսաստանի Դաշնությունից, Ուկրաինայից և Գերմանիայից:

ՀՊԱՀ մագիստրատուրայում սովորում են թվով 8 օտարերկրյա քաղաքացիներ, այդ թվում՝ 2-ը՝ Վրաստանից և 6-ը Իրանի Իսլամական Հանրապետությունից:

2011 ուս-տարում մեծացել է Իրանի Իսլամական Հանրապետությունից և այլ երկրներից ՀՊԱՀ-ի մագիստրատուրայում և ասպիրանտուրայում սովորողների քանակը: Ներկայումս ՀՊԱՀ-ի մագիստրատուրայում ասպիրանտուրայում սովորում են Իրանի Իսլամական հանրապետության շուրջ 200 քաղաքացի: Ակնկալվում է այս թաքանակի զգալի աճ գալիք տարում:

Ընդհանուր առմամբ ՀՊԱՀ-ն շուրջ 70 համագործակցության պայմանագրեր ունի աշխարհի տարբեր երկրների ագրարային բուհերի, միջազգային և այլ կազմակերպությունների հետ:

7. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2011թվականին նախկին տեղեկատվության և տեղեկատվական գիտելիքի կենտրոնը վերակազմավորվեց և անվանվեց տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն:

Ներկայումս կենտրոնի կազմի մեջ մտնում են հետևյալ ստորաբաժանումները՝ գիտական գրադարանը, տեղեկատվական համակարգերի կառավարման բաժինը, տեղեկատվական տեխնոլոգիական համակարգերի սպասարկման բաժինը, տեղեկատվական տեխնոլոգիաների գիտելիքի բաժինը, ինչպես նաև Էլեկտրոնային ուսուցման և ինտերնետ կապի համակարգչային կաբինետները:

Կենտրոնը ներկայումս իրականացնում է համալսարանի պաշտոնական կայքէջի, գրադարանային գործի ավտոմատացման, Էլեկտրոնային դեկանատների, Էլեկտրոնային ուսուցման, ներքին փաստաթղթաշրջանառության և մի շարք այլ համակարգերի ստեղծման ու զարգացման աշխատանքները: Աշխատանքներ են տարվում բուհում տեղեկատվության կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների կրթության, ինչպես նաև համակարգչային հմտությունների ինտենսիվ դասընթացների կազմակերպման ուղղությամբ, որոնք թույլ կտան պրոֆեսորադասախոսական անձնակազմին առավել արդյունավետ իրականացնել ուսումնական գործընթացը, իսկ ուսանողներին՝ ավելի ինտենսիվ, ամբողջական և արդյունավետ մեթոդներով յուրացնել գիտելիքները:

Տարվա ընթացքում կենտրոնն իրականացրեց մի շարք աշխատանքներ, որոնցից մի քանիսը արժանի են հիշատակման:

- Վանաձորի և Ստեփանակերտի մասնաճյուղերում Էլեկտրոնային լսարանի ստեղծումն ու կահավորումը ժամանակակից բոլոր սարքավորումներով, որի արդյունքում երկու մասնաճյուղերն էլ հնարավորություն ունեն օնլայն ռեժիմով դասախոսություններ լսել ՀՊԱՀ-ից:

- Վեց ամսվա ընթացքում ամբողջովին նոր համակարգով ստեղծվեց համալսարանի նոր կայքէջ և նոյեմբեր ամսվա սկզբին տեղի ունեցավ ՀՊԱՀ-ի նոր կայքէջի շնորհանդեսը: Կայքը բավականին բովանդակալից է, ունի մեծ հնարավորություններ և գործիքներ, պարունակում է զգալի տեղեկատվություն, դինամիկ է և համապատասխանում է արդի բոլոր պահանջներին:

- Տարվա վերջում ելևելով պահանջից՝ նոր պայմանագիր կնքվեց ինտերնետային կապ տրամադրող «ADC» ընկերության հետ, որի արդյունքում համալսարանի ինտերնետային կապը հզորացավ շուրջ 10 անգամ:

- ՏՏ կենտրոնը և «Օրանժ Արմենիա» կազմակերպությունը համատեղ համալսարանում ստեղծեցին հարմարավետ կահավորանքով WI-FI ինտերնետային անկյուն, որտեղ ուսանողները և դասախոսները կարողանում են անվճար օգտվել ինտերնետից:

Կենտրոնի կազմում գտնվող բաժինների կողմից բացի վերոնշյալ աշխատանքներից իրականացվել են նաև տարաբնույթ այլ աշխատանքներ, որոնք առավել հանգամանորեն ներկայացված են ստորև՝ համապատասխան ենթաբաժիններում:

4.1. Գիտական գրադարան

2011թ. ստեղծվեց գրադարանի կայքէջը, կազմակերպվեցին մի շարք միջոցառումներ, կատարվեցին նախապատրաստական աշխատանքներ գրադարանի սպասարկման ավտոմատացման ուղղությամբ:

ՀՊԱՀ-ի գիտական գրադարանի ֆոնդը առ 01.01.2012թ. կազմում է **552.087** միավոր գրականություն:

2011թ. ՀՊԱՀ գրադարանի գրքային ֆոնդից դուրս է գրվել և անհատույց մասնաճյուղերին է հանձնվել **497** միավոր գրականություն:

Ըստ միասնական ընթերցողական տոմսի ընթերցողների թիվը կազմում է **6.105** ընթերցող:

Ընթերցողների հաճախումը սպասարկման բոլոր կետերում կազմում է 121.583 հաճախում:

Սպասարկված գրականության քանակը կազմում է **123.523** միավոր գրականություն

2011թ. ընթերցասրահներում գրքերից և ամսագրերից՝ պատճենահանվել է **22.168** էջ:

2007թվականից գրադարանը կատարում է ALEPH գրադարանային ծրագրով գրականության մուտքագրում՝ մասնակցելով Հայաստանի գրադարանների էլեկտրոնային համահավաք գրացուցակի ստեղծման աշխատանքներին:

ALEPH ծրագրով 2011 թ. մուտքագրվել է 18.171 միավոր գրականություն: 2007 - 2011 թ.թ. մուտքագրվել է 46.793 անուն գրականություն

Չորս տարվա ընթացքում մուտքագրվել է ֆոնդի **46%-ը** :

2011թ. ստեղծվեց Ագրարային համալսարանի գրադարանի նոր կայքէջը, որի համար տրամադրվեց Հայաստանի պետական ագրարային համալսարանից առանձին դոմեն: Կայքում տեղեկատվություն է տրված գրադարանի մասին, ներկայացված է գրադարանի կառուցվածքը, գրադարանից օգտվելու կանոնները, գրադարանի կողմից բաժանորդագրված ամսագրերի ցուցակը և նրանց ինտերնետ էջերի հղումները: Ներկայացված են նաև գրադարանում ստացված նոր գրքերի ցուցակները, որոնք պարբերաբար թարմացվում են:

Ավելի քան 150 գրքի էլեկտրոնային տարբերակ կա ՀՊԱՀ գրադարանի կայքում: Տպագիր աշխատությունների թվայնացված տարբերակները հասանելի են ավելի մեծ լսարանի, ֆիզիկապես չեն մաշվում և հեշտ են բազմացվում:

Հարկ է նշել նաև, որ ՀՊԱՀ-ի տեղեկագրում տպագրված բոլոր հոդվածների էլեկտրոնային տարբերակները տեղադրվում են ՀՊԱՀ-ի ինտերնետային կայքում և մուտքագրվում AGRIS ցանցում, որի կազմակերպման աշխատանքներով զբաղվում է գրադարանը, մասնավորապես Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության տեղեկատվական կենտրոնը և էլեկտրոնային և մուլտիմեդիա ընթերցասրահների սեկտորը:

Գրադարանում գործում է **առցանց պատվեր** ծառայությունը, որից կարող են օգտվել ԶՊԱԶ-ի այն ուսանողները, դասախոսները և աշխատակիցները, որոնք գրանցված են գրադարանում և գրադարանի ընթերցող են: Այս ծառայությունը հնարավորություն է տալիս ընթերցողներին առանց գրադարան այցելելու պատվիրել իրենց անհրաժեշտ գրականությունը, իսկ հետո գալ գրադարան և վերցնել:

Աշխատանքներ են տարվում սպասարկման աշխատանքների ավտոմատացման ուղղությամբ: Այդ նպատակի համար ընտրվել է Evergreen ծրագիրը: Արդեն ավարտվում են նախապատրաստական աշխատանքները և հաջորդ ուսումնական տարում գրադարանն իր ընթերցողների սպասարկումը կկարողանա կատարել էլեկտրոնային եղանակով:

2012թ. ԶԶ-ում նշվելու է հայ տպագրության 500 ամյակը: Ինչպես նաև UNESCO-ի կողմից Երևանը ճանաչվել է գրքի մայրաքաղաք: Այս կապակցությամբ նախատեսվում են մի շարք միջոցառումներ, որոնց կմասնակցի նաև ԶՊԱԶ գրադարանը:

7.2. Տեղեկատվական համակարգերի կառավարման բաժին

2011 թվականին բաժնի հիմնական գործառնությունը եղել է Զայստանի պետական ագրարային համալսարանի պաշտոնական կայքէջի ստեղծումը և զարգացումը: Սկզբնական շրջանում ներդրվել էր TYPO3 բովանդակային կառավարման համակարգը և կատարվում էր այդ համակարգի տեխնիկական սպասարկում: Տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացմանը զուգընթաց անհրաժեշտություն առաջացավ անցնել առավել կատարելագործված և դինամիկ համակարգի, որը բավարարում է համալսարանի ժամանակակից պահանջներին: Ներդրվեց JOOMLA բովանդակային կառավարման համակարգը, որը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ օգտագործել համակարգը:

Տեղեկատվական համակարգերի կառավարման բաժինը տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի այլ բաժինների հետ համատեղ 2011թ.-ի ընթացքում կազմակերպել է մասնագիտացված լսարաններում օնլայն կոնֆերանսներ՝ Տիմիրյազևի անվան Ռուսաստանի պետական ագրարային համալսարանի հետ, միջազգային գիտաժողովի շրջանակներում օնլայն գեկուցումներ ԱՊՅ երկրների հետ, դասախոսությունների անցկացում Ստեփանակերտի և Վանաձորի մասնաճյուղերի համար և մի շարք այլ միջոցառումներ:

7.3. Տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի սպասարկման բաժին

Տեղեկատվական տեխնոլոգիական համակարգերի սպասարկման բաժինը ապահովում է ագրարային համալսարանի ամբիոնների և ստորաբաժանումների համակարգչային տեխնիկայի անխափան աշխատանքը: Կատարվում է նաև համակարգիչների, տպող սարքերի վերալիցքավորման (տպիչների, քսերոքս սարքերի), վերանորոգման, սպասարկման աշխատանքներ:

7.4. Տեղեկատվական տեխնոլոգիաների գիտելիքի բաժին

Տեղեկատվական տեխնոլոգիաների Գիտելիքի բաժինը, համաձայն ՏՏ կենտրոնի կանոնակարգի, իրականացնում է մի շարք գործառնություններ, այդ թվում՝ էլեկտրոնային ուսուցման ներդրման կազմակերպումը, ուսումնական և գիտական անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը, մշակումը և տարածումը:

Այսպես, SS գիտելիքի բաժինը, որպես SS կենտրոնի ստորաբաժանում, ակտիվորեն ներգրավված է Հայաստանի պետական ագրարային համալսարանի նոր կայքէջի ձևավորման և կայացման աշխատանքներում:

Աշխատանքներ են տարվել նաև էլեկտրոնային գրացուցակի ստեղծման ուղղությամբ, ուսումնասիրվել են մի շարք ծրագրեր, տեղադրվել է KOHA ծրագիրը, որը, սակայն ունի հայերեն լեզվով որոնման հետ կապված խնդիրներ: Այդ իսկ պատճառով ներկայումս բաժինն ուսումնասիրում է նոր ծրագրեր, որոնք կբավարարեն ՀՊԱՀ-ի էլեկտրոնային գրադարանի ծրագրային պահանջները:

Էլեկտրոնային դասընթացների մշակման և գործարկման նպատակով կենտրոնի կողմից մշակվել է ծրագիր, որի հիմնական նպատակն է համալսարանի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմին մատուցել հմտություններ (խորհրդատվության, թրեյնինգների, սեմինարների տեսքով)՝ համապատասխան ծրագրային ապահովման միջոցով սեփական էլեկտրոնային դասընթացների ստեղծման, մատուցման և գիտելիքների գնահատման համակարգ ստեղծելու վերաբերյալ:

7.5. Առաջիկա խնդիրները և նախատեսվող միջոցառումները

2012 թվականին կարևորագույն խնդիր է և նախատեսվում է իրականացնել արագագործ համակարգչային սերվերի տեղադրումը և շահագործումը, որի առկայության դեպքում հնարավորություն կստեղծվի բուհում ունենալ էլեկտրոնային ներքին աշխատանքային միջավայր (ներքին ցանցի միջոցով էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն և այլն), գրադարանի, էլեկտրոնային դեկանատների և այլ համապատասխան ստորաբաժանումների ավտոմատացման, տեղեկատվության պահպանման մեկ կենտրոնացված համակարգ, ինչպես նաև բուհի մնացած ստորաբաժանումներին այդ համակարգից օգտվելու հնարավորություն:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ծրագրերի զարգացման և առավել արդյունավետ իրականացման համար կենտրոնը նախատեսել է միջոցառումների համախումբ, որը հիմնականում ուղղված է հետևյալ գործընթացների կազմակերպմանը:

- Տեղեկատվության և գիտելիքի փոխանցման միջավայրի կատարելագործում՝
 - ա. էլեկտրոնային դասընթացների ծրագրերի ստեղծում,
 - բ. գրադարանային գործի ավտոմատացում (տվյալների որոնում էլեկտրոնային քարտադարանի միջոցով, սպասարկման ավտոմատացում անհատական էլեկտրոնային քարտերի միջոցով և այլն),
- Տեղեկատվության և գիտելիքի փոխանցման յուրահատուկ մեթոդների ներդրում՝ ուսուցման կազմակերպում համացանցի միջոցով և հեռուստակոնֆերանսների կիրառմամբ,
- Համապատասխան մասնագիտությունների գծով էլեկտրոնային ուսուցման ուսումնամեթոդական կյութերի մշակում՝
 - ա. տվյալ մասնագիտության համար անհրաժեշտ գիտելիքների էլեկտրոնային շտեմարանի ստեղծում,

բ. Էլեկտրոնային դասագրքեր online և offline կոնֆերանսներ, թեսթեր, ձայնի և պատկերի հեռահաղորդակցման միջոցներ,

- Էլեկտրոնային ուսուցում իրականացնող դասախոսների վերապատրաստում,

Էլեկտրոնային տեղեկատվության ճշգրիտ և արդյունավետ որոնման վերաբերյալ ուսուցման կազմակերպումը ուսանողների համար:

8. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԲԱԺԻՆ

Հաշվետու շրջանում, հաստատված ժամանակացույցի, որակավորման բարձրացում անցել են 51 դասախոս, որից ԱՄՆ-ի և Եվրոպայի առաջատար բուհում՝ 13-ը, ԱՊՀ-ի երկրներում՝ 2-ը, իսկ հանրապետությունում՝ 36-ը:

Գործուղման արդյունքները ներկայացվել են ամբիոնի նիստում, որտեղ հաստատվել են ներդրման համար առաջարկությունները: Բաժինն իր հսկողության տակ է պահում առաջարկությունների կատարման փաստը:

Որակավորման բարձրացում անցել են նաև ՀՊԱՀ- Վանաձորի, Սիսիանի և Արցախի մասնաճյուղերում աշխատող դասախոսները (14 մարդ), ինչպես նաև ՀՊԱՀՎՆԻ հետ համագործակցող գյուղատնտեսական քոլեջների դասախոսները (5 մարդ) և ՀՊՃՀ-ի 4 դասախոս:

Սերնդափոխությունը սահուն կերպով կատարելու համար 2002թ.-ից մինչ այժմ սահմանվել է ստաժոր-դասախոսի պատրաստման համակարգ, որի գործունեության արդյունքում առանձին ամբիոններում պատրաստվել են ստաժոր-դասախոսներ, որոնք հետագայում ապահովված են եղել անհրաժեշտ ուսումնական ծանրաբեռնվածությամբ:

Հաշվետու շրջանում ՀՊԱՀ-ի կողմից իրականացվել է ՀՀ գյուղատնտեսական մասնագետների և ֆերմերների որակավորման բարձրացման ծրագիր՝ 2 շաբաթ տևողությամբ դասընթացների անցկացման ձևով «Հացի և հացամթերքների տեխնոլոգիա», «Անտառագիտություն», «Բույսերի պաշտպանություն», «Ֆերմերների խորհրդատվություն և տեղեկատվություն» մասնագիտությունների գծով:

Դասախոսություններ են կարդացել բարձր մասնագիտական որակավորում ունեցող մանկավարժներ:

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության ծառայության պատվերով հաշվետու ժամանակամիջոցում ՀՊԱՀ-ն 2 անգամ իրականացրել է համակարգում (անասնաբույժների, սննդի անվտանգության փորձագետների և բուսասանիտարիայի մասնագետների) որակավորման բարձրացման ծրագրեր՝ 3 շաբաթ տևողությամբ:

Ծրագիրը իր մեջ նախատեսել է դասընթացների անցկացում և առանձին մասնագիտությամբ ունկնդիրների համար մեթոդական ցուցումների մշակում:

Որակավորման բարձրացում անցած մասնագետների թվաքանակը կազմել է 105 մարդ:

Մասնակիցներին շնորհվել են հավաստագրեր: Այս ծրագիրն ունի շարունակական բնույթ:

9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀԻՐՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության կենտրոնը կապող օղակ է մի կողմից ՀՊԱՀ-ի և մյուս կողմից հայկական մասնավոր ձեռնարկությունների, գյուղատնտեսության նախարարության, ագրոբիզնեսի բնագավառում գործատուների և գյուղացիական և գյուղատնտեսական ընկերակցությունների միջև:

Հաշվետու տարում դեպարտամենտը հաջողությամբ շարունակեց իր գործունեությունը հետևյալ հիմնական ուղղություններով՝

- գյուղատնտեսության ոլորտում աշխատատեղերի հնարավորությունների բացահայտում և դասակարգում,

- խորհրդատվություն կենսագրական փաստաթղթերի և հարցազրույցների տեխնիկայի վերաբերյալ, ծանոթացում ձեռնարկությունների գործունեության հետ,

- գործատուների և շրջանավարտների միջև կապերի ստեղծում և հարցազրույցների համակարգում,

- աշխատանքային տոնավաճառների կազմակերպում:

ԱՏԽԿ-ն տարբեր ուղիներով ապահովում է բազմազան և գործնական տեղեկատվություն. այն Եվրոպայում և ԱՄՆ-ում կրթությունը շարունակելու հնարավորությունների մասին տեղեկատվություն տրամադրող տեղական և միջազգային կրթական հաստատությունների ցանցի անդամ է:

Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության կենտրոնը հրատարակում է ամենշաբաթյա էլեկտրոնային տեղեկագիր, որի միջոցով շահառուներին է հասցվում տեղեկատվություն թափուր աշխատատեղերի, կրթությունը շարունակելու, մասնագիտական վերապատրաստման հնարավորությունների վերաբերյալ: ԱՏԽԿ տեղեկագիրը շրջանառվում է շրջանավարտների էլփոստի հասցեների ցուցակի միջոցով, որն ընդգրկում է ՀՊԱՀ-ի ավելի քան 1500 շրջանավարտների:

ՀՊԱՀ պաշտոնական կայքի վերագործարկումից ի վեր ԱՏԽԿ-ն ունի իր էջը համալսարանի կայքում, ինչպես նաև ԱՀԿՄԿ հիմնադրամի www.icare.am կայքում, որտեղից բոլոր ցանկացողները կարող են տեղեկատվություն ստանալ կենսագրական փաստաթղթերի կազմման, հարցազրույցներին մասնակցելու տեխնիկայի, կարիերայի զարգացման վերաբերյալ:

ԱՏԽԿ մասնակցում է երկրում կազմակերպվող բոլոր կրթական ցուցահանդեսներին: Այս ցուցահանդեսներից վերջին երկուսում՝ 2011 թ. նոյեմբերի 15-17-ը անցկացված «Կրթություն և կարիերա ԷԶՍՊՕ 2011» 12-րդ միջազգային մասնագիտացված ցուցահանդեսում և 2011 թ. ապրիլի 27-29-ը անցկացված «Ուսուցումը Հայաստանում 2011» միջազգային ավանդական 10-րդ ցուցահանդեսում ԱՏԽ կենտրոնը ներկայացվել է ՀՊԱՀ և Ագրոբիզնեսի դեպարտամենտի հետ միասին:

ԱՏԽԿ կարևորագույն գործառնություններից է աշխատանքային տոնավաճառների կազմակերպումը: Տոնավաճառի ընթացքում երիտասարդներին ներկայացվում են

աշխատաշուկայի առկա պահանջները, թափուր աշխատատեղերը, աշխատանքային պրակտիկայի և նոր հմտություններ ձեռք բերելու հնարավորությունները:

Յերթական տոնավաճառը անցկացվել է 2011 թ. մայիսի 22-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, Բրիտանական խորհրդի, Չափահասների կրթության գերմանական ընկերակցության միջազգային ինստիտուտի, Գլոբալ զարգացումներ հիմնադրամի, Հայաստանյան և ամերիկյան պալատների, Հայաստանի գործատուների հանրապետական միության, Հայաստանի կրթության ազգային ինստիտուտի և համալսարանների կարիերայի կենտրոնների ներկայացուցիչների համագործակցությամբ, որոնցից մեկը ՀՊԱՀ աշխատանքների տեղավորման և խորհրդատվության կենտրոնն էր:

Վերջին 5 տարիների ընթացքում ԱՏԽԿ-ի միջոցով խատանքի են ընդունվել 400-ից ավելի շրջանավարտներ:

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱԳՐՈԳԻՏԱՍՓՅՈՒՌ

ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ 2011թ

Հայաստանի Պետական Ագրարային Համալսարանի Ագրոգիտասփյուռ դեպարտամենտը՝ հիմք ընդունելով 2011 թ. ՀՊԱՀ-ի գիտական խորհրդի որոշումները, համալսարանի մասնագիտական 21 ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնակցությամբ, համագործակցելով տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների, գիտական կենտրոնների, անհատ ֆերմերային, գյուղացիական տնտեսությունների և վերամշակող ձեռնարկությունների հետ, հաշվետու ժամանակահատվածում ագրարային ոլորտում ծավալել է խորհրդատվական գործունեություն հետևյալ ուղղություններով՝

- Վաղ գարնանային ցրտահարությունների բացասական ազդեցությունների նվազեցման ուղղությամբ խորհրդատվություն
- Պտղատու ծառերի վաղ գարնանային աշխատանքների կազմակերպման արդյունավետության բարձրացում
- Պտղատուների վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի օպերատիվ խորհրդատվության կազմակերպում
- Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական արտադրության մասնագետների վերապատրաստում, որակավորման բարձրացում և գյուղատնտեսական կրթություն չունեցող ֆերմերների նախնական ուսուցում,
- Հայաստանի հանրապետությունում տավարաբուծության և տոհմային տնտեսությունների հեռանկարային զարգացման ուղղությունների վերլուծություն,
- Խաղողի հիվանդությունների և վնասատուների տարածվածության ուսումնասիրում և դրա դեմ պայքարի միջոցառումների կազմակերպման խորհրդատվություն,
- Հանրապետության ջրամատակարարման համակարգի արդյունավետության բարձրացման ուղիները

- Խաղողի սեղանի սորտերի և այլ հումքի ու մթերքների սառնարանային պահպանման տեխնոլոգիական հիմնահարցերի ուսումնասիրում և բարելավում,

- Նուռ, թուզ, արևելյան խուրմա արտադրող ֆերմերային տնտեսություններում ոռոգման գործընթացի արդյունավետ կազմակերպում, ուսուցում և խորհրդատվություն,

- Ոռոգման ջրի կառավարում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ,

- Մասնագիտական կողմնորոշման խորհրդատվական աշխատանքներ,

- Օպերատիվ խորհրդատվություն և տեղեկատվություն,

- Ուսանողների ընդգրկում խորհրդատվական աշխատանքների կազմակերպման մեջ:

Հանրապետության 10 մարզերում անցկացվել է թվով 48 սեմինար, կատարվել է 135 այցելություն, խորհրդատվություն է մատուցվել 965 ֆերմերի համար, սեմինարներին մասնակցել են ՀՊԱՀ-ից և գիտական կենտրոններից 45 դասախոս/գիտնական, 122 ուսանող/մարդ, հրատարակվել և բաժանվել է 9 անուն խորհրդատվական թերթիկ և գրքույկ, խորհրդատվական աշխատանքներում ընդգրկվել են ԳԱՄԿ-երի թվով 32 մասնագետ, կազմակերպվել և անցկացվել է խորհրդատվություն և տեղեկատվություն մասնագիտության բարձր կուրսերի ուսանողների, ինչպես նաև մագիստրանտների արտադրական պրակտիկան:

12. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

(ուս. խորհուրդ)

ՀՊԱՀ-ի ուսանողական խորհուրդը 2011թ. իր գործունեությունը իրականացրել է հետևյալ հիմնական ուղղություններով

- Ուսումնական,
- Գիտակրթական,
- Ուսումնադաստիրակչական:

Համալսարանի ուսանողական խորհուրդը ունի 25-տոկոսանոց ներկայացվածություն կառավարման բոլոր մարմիններում խորհուրդ, գիտական խորհուրդ, ֆակուլտետային գիտական խորհուրդներ:

Ուսանողական խորհրդի անդամներն ակտիվ մասնակցություն են ունեցել ուսանողների շրջափոխման գործընթացին: Ֆակուլտետների դեկանատների և ուսումնական մասի ներկայացուցիչների հետ բոլոր կուրսերում ներկայացվել են շրջափոխման արդյունքները: Ներկայացված արդյունքները ամբողջությամբ ընդունվել են ուսանողների կողմից:

Ուսանողական խորհրդի ներկայացուցիչները ուսանողների հիմնախնդիրների բացահայտման և լուծման նպատակով հանդիպումներ են ունեցել ինչպես բոլոր կուրսերի, այնպես էլ ֆակուլտետների մակարդակով:

Համալսարանի ուսանողական խորհրդի գործունեության հիմնական ուղղություններից են ուսանողների իրավունքների և շահերի ներկայացումն ու պաշտպանությունը: Տարվա ընթացքում եղել են բազմաթիվ ուսանողներ, ենթախմբեր, ովքեր ներկայացրել են

բազմաթիվ խնդիրներ՝ կապված ուսումնական գործընթացի, քննությունների կազմակերպման, դասախոսությունների որակի բարելավման և դասախոսների հետ: Դրանք նույնպես ներկայացվել են ամբիոնների, ֆակուլտետների և համալսարանի ղեկավարությանը:

Ուսանողական խորհուրդը գիտական կենտրոնի և ուսանողական գիտական ընկերության հետ համատեղ կազմակերպել են ուսանողական ամենամյա գիտաժողովը: Առաջին փուլը կազմակերպվել է ամբիոններում, ապա ֆակուլտետներում: Վերջում կազմակերպվել է ուսանողական գիտաժողովի համալսարանակն փուլը: ՈՒԳԸ-ի հետ իրականացվել են բազմաթիվ քննարկումներ, մասնագիտական օլիմպիադաներ, սեմինարներ, բանավեճ-քննարկումներ:

Համալսարանի ուսանողական խորհուրդը մեծ ուշադրություն է դարձրել ուսանողների ուսումնադաստիրակչական հարցերին: Տարվա ընթացքում իրականացվել են մշակութային, մարզական, ժամանցային, ճանաչողական, բնապահպանական, առողջապահական և բազմաթիվ այլ միջոցառումներ ու ծրագրեր:

Իրականացված միջոցառումները

- Սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին կազմակերպվել են ուսանողական խորհրդի ընտրություններ կուրսերում և ֆակուլտետներում:

- Կազմակերպվել են շախմատի, վոլեյբոլի, սեղանի թենիսի, բասկետբոլի միջֆակուլտետային առաջնություններ:

- Ապրիլի 15-ին կազմակերպվել է հուշ-ցերեկույթ նվիրված հայ մեծանուն ռազմական և քաղաքական գործիչ Գարեգին Նժդեհի ծննդյան 125 ամյակին:

- Ապրիլի 23-ին կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված Հայոց մեծ եղեռնի 96-րդ տարելիցին:

- Մայիսի 18-ին կազմակերպվել է Պարույր Սևակին նվիրված հուշ-ցերեկույթ:

- ՀՊԱՀ-ի ջոկատը օգոստոսին մասնակցել է «Բազե» համահայկական երիտասարդական հավաքին:

- Կազմակերպվել են հանդիպումներ մշակույթի, սպորտի, գիտության և արտադրության ճանաչված գործիչների հետ:

- Կազմակերպվել են միջֆակուլտետային 3, ներֆակուլտետային 7 ինտելեկտուալ առաջնություններ :

- Տարվա ընթացքում պարբերաբար բացատրական աշխատանքներ են տարվել ցածր առաջադիմություն և վատ հաճախումներ ունեցող ուսանողների հետ:

- Ուսանողական խորհրդի անդամները մասնակցել են անվանական կրթաթոշակների նշանակման, վարձավճարների զեղչման, ինչպես նաև անապահով ուսանողներին ֆինանսական օգնության տրամադրման գործընթացներին:

- Շարունակվել է համագործակցությունը հանրապետության և Արցախի պետական բուհերի ուսանողական կազմակերպությունների, Հայաստանի երիտասարդական հիմնա-

դրամի, Հայաստանի երիտասարդության ազգային խորհրդի, Հայաստանի ուսանողության ազգային ասոցիացիայի հետ:

- Տարվա ընթացքում ուսանողները պարբերաբար մասնակցել են տարբեր բնապահպանական աշխատանքների, հատկապես «Միասնության ծառատունկ 2011» ծրագրին և «Վալեքս» ընկերության կողմից կազմակերպված ծառատունկներին:

- Պարբերաբար ուսանողների համար կազմակերպվել են էքսկուրսիաներ, արշավներ, այցելություններ հանրապետության տեսարժան վայրեր և պատմամշակութային հուշարձաններ, թանգարաններ:

- Տարվա ընթացքում Ուսանողական գիտական ընկերության և համապատասխան ամբիոնների հետ կազմակերպվել են ուսանողական մասնագիտական օլիմպիադաներ:

- Դեկտեմբերի 23-ին իրականացվել է «Ոսկե հասկ» ամենամյա հիգիերորդ մրցանակաբաշխությունը:

- Դեկտեմբերի 29-ին կազմակերպվել է ամանորյա ուսանողական միջոցառում:

***«Հայաստանի պետական ագրարային համալսարան» ոչ առևտրային
կազմակերպության խորհրդի 2012թ. հունվարի 24-ի նիստի***

Որոշում

Հավանություն տալ և հաստատել ներկայացված հաշվետվությունը համալսարանի 2011թ. գործունեության վերաբերյալ:

Հավանություն տալ և հաստատել 2012թ. բյուջեի նախահաշվի նախագծին և սահմանված կարգով այն ներկայացնել ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

Ընդունել համալսարանի ռեկտոր Ա.Թարվերդյանի առաջարկը 2012թ. հունվարի 1-ից համալսարանի բոլոր աշխատակիցների աշխատավարձը 10%-ով բարձրացնելու մասին:

ՀՀ կրթության և գիտության նախարար Ա.Աշոտյանի առաջարկությամբ հանձնարարվեց խորհրդի նախագահ Մ.Բադալյանին, ռեկտոր Ա.Թարվերդյանին շնորհակալական նամակ հղել ՀՀ նախագահ պարոն Ս.Սարգսյանին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության երեք գիտական կենտրոններ վերակազմակերպելու, ՀՊԱՀ կազմում դրանք ներառելու համաձայնություն տալու և գործընթացի իրականացմանը հետևողական վերաբերմունք ցուցաբերելու համար:

***Հայաստանի պետական
ագրարային համալսարանի
ռեկտոր***

Ա. Պ. Թարվերդյան

24 հունվարի 2012թ